№ 172 ՈՒՐԲԱԹ, 7 ՕԳՈՍՏՈՍԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՋՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 7 ՕԳՈՍՏՈՍԻ № 172

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱԳԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Օգոստոսի 4-ին, գիշերը, ծանր և երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանվեց 78 տարեկան հասակում

ՎԱՐՎԱՌԷ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԱՌԱՔԵԼԵԱՆԸ

որի մասին նրա որդիները՝ Համբարձում և Առշակ Առաքելեանները, հարս՝ Եղիսաբէթ Առաքելեանը, դուստրներ՝ Հեղինէ Առստամեանը և Մարիամ Նազարբէկեանը և փեսայ՝ Զաքարիա Նազարբէկեանը, թոռներ՝ Սուրէն Առաքելեանը, Արփենիկ, Այծեմնիկ և Աղաւնիկ Նազարբէկեանները յայտնում են ցաւով իրանց ազգականներին և ծանօթներին։ Հոգեհանգիստը կը լինի այսօր, ուրբաթ, օգոստոսի 7-ին, երեկոյեան ժամը 7-ին Մուղնու ս. Գէորգ եկեղեցում, իսկ թաղումը վաղը, շաբաթ։

522. 2—1

ԹԻՖԼԻՍԻ II ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Սրանով յայտարարում է, որ վերաքննութիւնները կը սկսվեն օգոստոսի 20-ից, իսկ ընդունելութեան քննութիւնները՝ բոլոր դասարանների համար՝ բացի VII և VIII դասարաններից, օգոստոսի 25-ից։ Քննութիւնների սկիզբը առաւօտեան ժամը 8-ին։ Մաղթանքը՝ օգոստոսի 31-ին։ Կանոնաւոր պարապմունքները սեպտեմբերի 1-ից։ Պանաէվսկայա փող., տ. 38, տելէֆոն № 3—10։ 520 3—3

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օգոստոսի 9-ին, կիրակի, երեկոյեան ժամը 8-ին
Նշանակված է

Խորհրդակցութիւն թիւրքահայ փախստականների դրութեան մասին,

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ։

Կը լինեն հետաքրքրական զեկուցումներ Վանից և Հայաստանից եկած մի քանի մտաւորականների, որոնց թւում Վանի Վարժապետանոցի տեսուչ պրոֆ. Մ. Մինասեանի, Վարագի Ժառանգաւորաց դպրոցի տեսուչ Ա. Դարբինեանի, Միացեալ Ընկերութեան Երզրումի շրջանի վարժարանաց տնօրէն Ա. Պապաճանեանի։

Ցանկացողները՝ ներկայ լինել խորհրդակցութեան՝ պէտք է ձեռք բերեն հրաւիրատոմս Նպաստամատոյց Ընկերութիւնից։

Խորհրդակցութիւնից յետոյ կը կայանայ Նպաստամատոյց Ընկերութեան ընդհանուր ժողովը, որի օրակարգի առարկաները կը լինեն 1) Քննութիւն առաջարկի վարչութեան՝ հիմնել որբանոց փախստականների համար, 2) Ընտրութիւն վարչութեան անդամների և փոխ-անդամների՝ քաղաքից հեռացած կամ հրաժարված անդամների փոխարէն, 3) Ընթացիկ գործեր։ առ. (կ.) 621. 3—2

Թիֆլիսի Մարիամեան-Յովնանեան Օրիորդաց Դպրոցում առաջիկայ 1915—1916 ուսումն. տարվայ համար ընդունելութիւն կայ Բ. դասարանում և սահմանափակ թւով բարձր դասարաններում։ Խնդիրներ ընդունվում են դպրոցում մինչև օգոստոսի 23-ը։ Քննութիւններն սկսվելու են վերաքննութիւնների հետ օգոստոսի 25-ին, առաւօտեան ժամը 9-ին։ Խնդիրների հետ պէտք է ներկայացնել մետրիքական կամ քաղուածք և ծաղկի պատուաստման վկայականներ. առանց վկայականների խնդիրները կը մնան անհետևանք. դպրոցի ձրիավարժների թիւը լրիւ լինելով՝ նոր ձրիավարժներ չեն ընդունվում։

առ. (7.) 451. 2—2 Տեսուչ՝ Ց. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչևսկայա 13, տելէֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանանց և թէ [illegible], նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց

(չ.ու. կ.) առ 970. 100—72

Բեռլինի համալսարանի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈՏՕՐԱՔՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԷՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր. 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ առ ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29.

առ. (ա. օ.) 504. 100—8

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ԾԾՄԲԻ ԾԱՂԻԿ

«ԲՈՒԴԴԱ»

բարձր տեսակի։ Տեղեկանալ ամեն օր՝ առ. ժամը 9-ից մինչև ցեր. ժ. 3-ը, Սայինովի գինետանը՝ Սոլոլակսկայա, № 1.

(օ. մ.) առ. 512. 3—3

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

## ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

### ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
6 օգոստոսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Օգոստոսի 3-ին ծովամերձ շրջանում սովորական հրացանաձգութիւն էր։

Օլթիի ուղղութեամբ հետախուզութիւն կատարող մասերի ընդհարումներ են։

Բասէնի հովտում թիւրքերի առաջխաղացումը Թօրխօջիի վրա կանգնեցված է. առանձնապէս աջող էր գործում մեր թնդանօթային կրակը։ Կարա-Դերբենդից հարաւ մենք կռւով գրաւեցինք թիւրքերի ամուր դիրքերից մէկը Միրզա-աղա սարի վրա։

Եփրատի ուղղութեամբ մեր զօրասիւնը կռւով գրաւեց Փըրխուսի դիրքը և վանեց թիւրքերին դէպի արևմուտք։ Օրվայ ընթացքում մենք գերի վերցրինք մի բատալիոնի հրամանատար, չորս օբեր-օֆիցեր և 300-ից աւելի ասկեարներ. խլել ենք մթերակիր սայլեր հրացաններով ու ձեռնաձիգ ռումբերով բեռնաւորված և անասունների մեծաքանակ հօտ։

Մնացեալ ճակատի վրա փոփոխութիւններ չը կան։

### ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԷԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
6 օգոստոսի

ԱԹԷՆՔ.—Միտիլէն կղզուց հաղորդում են, որ ֆրանսիական հակառականակիրները երէկ ռմբակոծեցին Եզրէմիտի ծոցի ափը։

Կրետիայի շրջանում կատաղի կռիւներ են։

Հաւաստի աղբիւրներից հաղորդում են, որ դաշնակիցների թիկնանց շարժումը Գալիպոլի թերակղզում կատարեալ աջողութիւն է ունեցել։

ՍՈԼՈՒՆ.—Մուդրոսից հաղորդում են, յուլ. 24-ից, թէ անգլիացիները միանգամայն աջողութեամբ զօրք ափ իջեցրին Նեվլի ծոցի մի քանի տեղում։ Դաշնակիցները սոսկ չափով առաջ շարժվեցին Կարա-Թեփէի շրջանում, ուր նրանց կատաղի կռւից յետոյ աջողվեց ամրանալ Սարիբայիր լեռնակատարում, վերցնելով 650 գերի և 9 գնդացիր։

Կ. Պոլսից հաղորդում են, որ Գալիպոլի թերակղզուց շարունակում են սարսափելի չափերով վիրաւորներ գալ։ Մի օրվայ մէջ եկել է 35 վագօն վիրաւորներով լի։ Զինւորական իշխանութիւնները ստիպված են հաւաքել 500 կառքերից աւելի՝ այդ վիրաւորներին հիւանդանոցները տեղափոխելու համար։ Հաւաստացնում են, որ Գալիպոլի թերակղզուց բերված վիրաւորների թիւը հասնում է 120,000-ի։

ԱԹԷՆՔ.—Դաշնակիցները Գալիպոլիում մի քանի տեղ զօրք իջեցրին։

### ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
6 օգոստոսի

ՀՌՈՄ.—«Ջիօռնալէ դ'Իտալիա» տեղեկացել է, որ Բ. Դուռը ետ է վերցրել իր համաձայնութիւնը իտալացիների մեկնելու մասին։ Շատ իտալացիներ սպասում են Բէյրութում, Եաֆֆայում, Մերսինում, Ալէքսանդրէտում, գաղութներում և Զմիւռնիայում, որ նաւ նստեն. նրանց մէջ կան 700 պահեստի զինւորներ, որոնք ստիպված են մնալ։ Լրագիրը յայտնում է, որ այդ լուրերը ճշգված աղբիւրներից են բղխում և ընդունում բացառիկ կարևորութիւն և նորից հարց է ծագում թիւրք-իտալական յարաբերութիւնների վտանգաւոր հողի վրա դրվելու մասին։ Մասնաւոր տեղեկութիւնները հաստատում են նոյնպէս, որ Թիւրքիան Լիվիա է ուղարկում մեծ քանակութեամբ ռազմամթերք, փող և թռուցիկներ, որպէսզի այնտեղ՝ տեղական ազգաբնակութիւնը ապստամբեցնի Իտալիայի դէմ։ «Մեր բարեկամութիւնը և համբերողութիւնը,—ասում է լրագիրը,—ջարդվում են Թիւրքիայի անբարեխղճութեան և պրովոկացիայի դէմ»։ Վերջում լրագիրը կցում է. «Մենք լուրջ առիթներ ունենք կարծելու, որ կառավարութիւնը եռանդուն դիրք կը բռնի Թիւրքիայի նկատմամբ՝ բանակցութիւնը վերջնականապէս դադարեցնելու, որին Իտալիան այլևս չի կարող հանդուրժել»։

—

(Լրագիրներից)

◆ Լուրերի համաձայն, անգլիական սուզանաւերը մտել են Սև-ծովը։ Նրանք աջողեցրել են խորտակել «Բրեսլաու» ռազմանաւը։

◆ Աթէնքից հեռագրում են, որ Իտալիան գրաւելու է Ադալիա նաւահանգիստը։

### ՌՈՒՄԻՆԻԱՆ ԵՒ ԴԱՐԴԱՆԷԼԻ ՀԱՐՑԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
6 օգոստոսի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—«Ռումինա» լրագիրը Տակիոնէսկուի խմբագրութեամբ լոյս տեսնող բաժանում գրում է.

«Դարդանէլը ռուսների տիրապետութեան ներքոյ ընկնելուց Ռումինիայի համար ծագող վտանգի մասին սկսված բազմաթիւ զրոյցներից յետոյ, քննենք այժմ էլ այն իրական վտանգը, որ բղխում է նեղուցները գերմանացիների ձեռքն անցնելու դէպքում։ Եթէ ռուսները տիրանան նեղուցներին, յարաբերութիւն կը պահպանեն նրանց հետ Փոքր-Ասիայի վրայով և Սև ծովով՝ մեր հայրենիքից զատ։ Մինչդեռ Գերմանիան ձգտում է վերականգնել Հռոմի կայսրութիւնը Հօհենցոլլերների գաւազանի ներքոյ։ Այդպիսով Կ. Պոլիսն ու նեղուցները անխուսափելիօրէն դառնում են Գերմանիայի նպատակը։ Գերմանիայի քաղաքականութիւնը Մերձաւոր-Արևելքում միշտ ձգտում էր տիրանալ Կ. Պոլսին ու նեղուցներին։ Ապացոյցներ. Վիլհելմ կայսրի Պաղեստին գնալը, Տանժէրում իջնելը, Բաղդադի երկաթուղագծի կառուցումը, գերմանական միսիա նշանակելը Թիւրքիայում, որը օսմանեան կայսրութեան համար ներկայ պատերազմի առիթ դարձաւ։ Գերմանիան, ոչ նման Ռուսաստանի, նեղուցներին տիրանալու համար՝ ունի միայն մի ճանապարհ—Բալկանեան թերակղզու վրայով։ Ամեն մի ողջմիտ մարդու համար պարզ է, որ մեզ համար վտանգը կայանում է Դարդանէլը ոչ թէ Ռուսաստանի իշխանութեան տակ անցնելու մէջ, այլ Գերմանիայի, որովհետև վերջինիս ներկայութիւնը Կ. Պոլսում և անկախ Ռումինիայի պետութեան գոյութիւնը իրար ներհակ բաներ են։ Օրվայ մեծ հարցն այն ընտրութիւնն է, որը պէտք է անի ռումին ազգը քառեակ համաձայնութեան յաղթանակի և իր քաղաքական ուժի մէջ, որովհետև Գերմանիայի յաղթութիւնը կը դարձնի 14 միլիոն ռումինների ստրուկը տևտոնների։ Գտնվում էին կուրացած մարդիկ, որոնք ասում էին, թէ մենք չենք կարող գործել քառեակ համաձայնութեան հետ միասին՝ նեղուցների հարցի շնորհիւ։ Բայց իրողութիւնը նրանում է, որ մենք հէնց այդ իսկ հարցի պատճառով էլ պէտք է յարենք քառեակ համաձայնութեանը»։

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

### ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
6 օգոստոսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ռիգայի շրջանում և Եակոբշտադտի ուղղութեամբ դրութեան մէջ էական փոփոխութիւն չը կայ։ Թշնամու նաւատորմի փորձերը ականներ գցել Ռիգայի ծովածոցում՝ ետ մղվեցին մեր նաւերի կրակով։ Դվինայի ուղղութեամբ օգոստոսի 4-ի գիշերը և հետևեալ օրը գերմանացիների փորձերը՝ անցնել յարձակման՝ ետ մղվեցին։ Կօվնօյի մօտ, 11-օրեայ կատաղի կռիւներից յետոյ, որ թշնամուն խոշոր կորուստներ նստեց, գերմանացիներին աջողվեց հաստատվել այն ամրութիւններում, որոնք ընկած են Նեմանի ձախ ափին։ Եսի գետից դէպի արևմուտք գերմանացիները փորձեր են անում անցնել աջ ափը, ուր ամրութիւնների մի մասը գտնվում է մեր ձեռքին։ Նեմանի աջ ափում բոլոր ամրութիւնները մեր ձեռքին են։ Նարևից վերև ռազմաճակատում, նաև Նարևի և Բուգի միջև, օգոստոսի 3-ին և 4-ին կռիւները շարունակվում էին փոփոխական աջողութեամբ. առանձին յամառութեամբ թշնամին յարձակումներ գործեց արևմուտքից դէպի Բելոստոկ և Բելսկ։ Բուգում, Սեդլեց-Զերեմխա երկաթուղագծի շրջանում, ետ մղելով գերմանացիների յարձակումը, մենք աջող հակայարձակում գործեցինք. վերցվեցին մի քանի գընդակացիր։ Նովոգեորգիևսկի շրջանում թշնամին շարունակում է յամառ յարձակումները հիւսիս-արևելեան ճակատի ամրութիւնների դէմ, ըստ որում գերմանացիների գլխաւոր ջանքերը ուղղըված են այն ամրութեան դէմ, որ փակում է երկաթուղին Մլավայից։ Վերին Բուգում, Զօլոտայա Լիպայում և Դնեստրում դրութիւնը անփոփոխ է։

### ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
6 օգոստոսի

ՊԱՐԻԶ.—Ամբողջ գիշերը զօրաճակատի այլևայլ կէտերում—Բուասէնտի և Կէնշվիլէրի մօտ, նաև Լօթարինգիայում՝ Արրակուրի ու Լէյնտրէյի մօտ, բաւականին ուժեղ թնդանօթային կռիւ է։ Արգօններում Ֆօնտէն-Շարմի և Օտշէվօշի մօտ կռւում են ձեռնաձիգ ռումբերով։ Վերջին կէտում գերմանացիները երէկ երեկոյեան դուրս եկան իրանց խրամատներից ու գրոհի դիմեցին, բայց մեր կրակը ետ մղեց նրանց կրկին դէպի իրանց գիծը։

Երեկոյեան ժամը 11-ին պաշտօնական հաղորդագրութիւն։ Զօրաճակատի մեծ մասի վրա տեղի էին ունենում թնդանօթային կռիւներ, բայց առանց մի որևէ որոշ հետևանքի։ Վօգէզներում մենք ուժեղ ռմբակոծութեան ենթարկեցինք թշնամու դիրքերը Լէնժ-Րէյխակ Կերկոպֆ շրջանում և Սօնդերնախտի ու Լանդերսբախի մէջ եղած լեռնաշղթայի վրա։ Այս վերջին կէտում մեր հետևակները յարձակման դիմեցին, տիրեցին լեռնաշղթան ու հաստատվեցին նրա վրա։ Թշնամու հակայարձակումը ետ մղվեց։

### ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
6 օգոստոսի

ՆԻՇ.—Բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ բացվեց սկուպշչինան։ Ընդդիմադիրների լիդէր Վելիկովիչի հարցին, թէ ի՞նչ դրութիւն է տիրում քառեակ համաձայնութեան քայլից յետոյ, սկուպշչինայի նախագահը յայտնեց, որ Պաշիչի Կրագուէվացից վերադառնալուն պէս փակ նիստ է լինելու, որտեղ կառավարութիւնը բացատրութիւն կը տայ արտաքին քաղաքականութեան մասին։

ՍՕՖԻԱ.—Կառավարական շրջաններում մատնանշում են այն բանի վրա, որ բուլղարական պատգամաւորների յետս կոչումը Կ. Պոլսից՝ չի նշանակում, թէ բանակցութիւններն ընդհատվում են, որոնք այժմ շարունակվում են, թէև աջողութեան նուազ հաւանականութեամբ։ Քաղաքական շրջաններում կարծիքներ յայտնելու մէջ ձեռնպահ են մնում, թէ Բուլղարիան ի՞նչ պատասխան է տալու քառեակ համաձայնութեան նոտային, սպասելով սերբիական սկուպշչինայի և յունական պարլամենտի նիստերի հետևանքին։

ՎԱՇԻՆԳՏՕՆ.—Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Իտալիան և Բելգիան համաձայնել են բամբակը պատերազմական կոնտրաբանտ ճանաչել։

ԱԹԷՆՔ.—Թագաւորը Վենիզելոսին յանձնարարեց նոր կաբինէտ կազմել։ Վենիզելոսը 4 օր ժամանակ խնդրեց գործերի հետ ծանօթանալու համար։ Թագաւորը տուել է իր համաձայնութիւնը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Թագաւոր Կայսրը, տեղեկանալով, որ վիրաւորներին տեղաւորելու համար շէնքերի մեծ պակասութիւն է զգացվում, ամենաողորմածաբար հրամայել հաճեց յատկացնելու մեր վիրաւորներին տեղաւորելու համար Ձմեռային պալատը և պալատական ուրիշ յարմար շէնքերը։ Ձմեռային պալատը, բացի երկու հանդիսի դահլիճներից, ամբողջովին յատկացվում է այդ նպատակով։

### ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
6 օգոստոսի

ԹԵՀՐԱՆ.—Գիշերը աւազակախումբը, 40 թենգինստացիներից, երեք կողմից կրակեց Բուշիրի մեր աւագ հիւպատոսարանի վրա։ Հիւպատոսարանի պահակախումբը, որ կազմած է 10 կոզակից, ետ մղեց յարձակումը։ Ոչ ոք չը վիրաւորվեց։ Կոզակների արարքը վեր է ամեն գովեստից։ Մի քանի ժամանակ անց աւազակների փախուստից յետոյ մօտեցան հնդկական սիպայները։

ԹԵՀՐԱՆ.—Քիրմանշահի գերմանական հիւպատասը, որ յայտնել է, թէ հաշւի չէ առնում Պարսկաստանի չէզոքութիւնը, ոյժով կարգելի անգլիական և ռուսական հիւպատոսներին Քիրմանշահ մտնել, այժմ զինված վաշտով դուրս է եկել երկու հիւպատոսի դէմ, վերջնագրով նախազգուշացնելով Քիրմանշահի նահանգապետին, որի մօտ մնացել են հիւպատոսները, որ եթէ հիւպատոսները չը հեռացվեն, ուստի այդ բանը կանի ինքը ոյժով։ Պարսից կառավարութիւնը առաջվայ պէս ցոյց է տալի իր անկարութիւնը։ Որովհետև մինիստրական ճգնաժամը շարունակվում է, Պարսկաստանի հարաւում շարժումը անգլիացիների դէմ չի դադարում։ Բուշիրի շրջաններում աւերված է «Բրիտիշ-Ինդիա» կոմպանիայի շէնքը և յարձակում է եղել բանկի վերատեսչի տան վրա։ Թէև Պարսկաստանի դրութիւնը հանդիսանում է լուրջ, բայց և այնպէս, չը նայած մեր թշնամիների ջանքերին և նրանց մեր դէմ յարուցած յուզումներին, մեր զօրքերի վերջին աջողութիւնները կովկասեան ճակատում, մօտ օրերս աւղանական սահմանը մեր կողմից զօրք ուղարկելը, գերմանացիների ղեկավարած աւազակախմբերը ցրելը և Ղազվինի մեր վաշտի ատրճանական ջանքերը չեն թողնում, որ Պարսկաստանը վերջնականապէս ենթարկվի մեր թշնամիներին։

ՍՊԱՀԱՆ.—Արաբիայի երկու աւազակախմբերի ղեկավարների՝ Շիրաքեանի և Մաշալեանի միջև կռիւներ են լինում. երկու կողմն էլ մեծ կորուստներ են ունենում։

ԹԵՀՐԱՆ. — Կաբինէտը Մուստաֆա-ուլ-Մամալէկի նախագահութեամբ հաստատվեց շահի կողմից և ներկայացաւ մէջլիսին։

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Կոպենհագէնից հեռագրում են, որ Բուրիանը գտնվում է Բեռլինում։ Նա երկարատև խորհրդակցութիւն է ունեցել ֆոն Յագովի հետ։ Լուրերի համաձայն, Բուրիանի Բեռլին ժամանելը կապ ունի հաշտութեան պայմանների հետ, որ առաջարկել է Գերմանիան Ռուսաստանին, կապ ունի նաև լեհական հարցի հետ։

◆ Առաջիկայ շաբաթ Մոսկվայում լեհական համագումարը քննելու է Լեհաստանի դրութիւնը։

◆ Յունաստանից հեռագրում են Բեռլին, որ Վենիզելոսը յայտարարել է, թէ Յունաստանը կը գնայ քառեակ համաձայնութեան հետ, որովհետև Աւստրիան, որ ծարաւի է տիրելու Սոլունը, հելլենականութեան թշնամին է. Գերմանիան էլ Թիւրքիայի դաշնակիցն է։

◆ Բուխարեստից յայտնում են, որ բուլղարական պատուիրակները ետ են կանչված Ծարգրադից։ Բանակցութիւնները խզված են։

◆ Ցիւրիխից ստացված տեղեկութիւնների համաձայն, աւստրիացիները պարգև են խոստանում նրան, ով գերի կը վերցնէ իտալական նշանաւոր վրոզ դ'Անունցիօյին։

◆ «Բասլարական Կուրիէրի» ասելով, պապը յօգուտ Արևելեան Պրուսիայի արկածեալ ազգաբնակութեան դրամ է նուիրել։

◆ «Н. В.»-ի ասելով, մեր ռազմական գիծը մօտեցել է Կովնօյին հարաւի կողմից։ Լիակատար հիմք կայ կարծելու, որ մեր բերդերը կարգի կը բերեն գործը, և Կովնօն կը մնայ մեր ձեռքին։

◆ Դիպլոմատիական շրջաններում մեծ բաւականութեամբ է ընդունվել յունական կաբինէտի հրաժարականը։ Ենթադրում են, որ Յունաստանը ճանապարհ կը գտնի քառեակ համաձայնութեան հետ միանալու։

◆ Գերմանացիները Սեդլէցից կոնտրիբուցիա պահանջեցին 50,000 րուբլի, ճարվեց միայն 5000 րուբլի։ Որպէս պատանդներ վերցվեցին երկու լեհ և երկու հրէայ։

◆ Դանիայից եկած լուրերի հիման վրա, Գերմանիայում անիշխանական շարժումը ուժեղանում է։ Կոչ են անում միլիտարիզմի դէմ։ Ամենուրեք խուզարկութիւններ են կատարվում։ Գնդակահարութեան մի քանի դէպքեր են եղել։ Լրագիրներին արգելված է այդ մասին որևէ բան տպել։

◆ «Բեռլինի օրագիր» թերթը հաղորդում է, որ ռուսները Կովնօյի շրջանում աւերել են ամեն ինչ։ Գերմանացիները, որպէս անապատում, մնացել են վրանների մէջ։

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՑՈՒՑԱԿ

Շահար-Շաուզի նուիրատուների
(Յօգուտ հայ փախստական-գաղթականների)
(Տես «Մշակ» № 154)

Ոհ՝ 25 ր., Յ. Բաղդեան 10 ր., Ա. Սուրբաղէ 8 ր., Վ. Խաչատրեան 5 ր., Յ. Ղասումեան 3 ր. 50 կ., Հ. Իսրայէլեան, Մ. Պետրոսեան, Կ. Ղահրեան 3-ական ր., Յ. Բալեան 2 ր., Ա. Յակոբջանեան 1 ր. 50 կ., Ա. Միքայէլեան, Ս. Տէր-Բաղդասարեան, Գ. Հասանեան, Ա. Բաղդադեան, Մ. Բաղդալեան և Ա. Յովսէփեան 1-ական ր., Կ. Դանիէլեան և Յ. Պետրոսեան 50-ական կ.։ Ընդամենը 71 ր.։

## ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Տիկին Վարվառէ Առաքելեանի մահվան առիթով, նրա զաւակները նուիրել են պսակի փոխարէն 100 ր. յօգուտ փախստականների։

Նոյնպէս և փեսայ Զաքարիա ու դուստր Մարիամ Նազարբէկեանները Թաւրիզից հեռագրով նուիրել են պսակի փոխարէն 100 ր. յօգուտ փախստականների։

## ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ

### I

Մեծ-Ղարաքիլիսա, 3 օգոստոսի

Գաղթականների գլխ. հոսանքն արդէն հեղեղել է Ալեքսանդրոպոլի ամբողջ գաւառը։

Հազարաւոր մերկանդամ ու սոված, հիւանդ ու հիւծված փախստականներ լցվել են շրջանիս հայաբնակ գիւղերը։ Ամենքն էլ տանջված ու թալանված. գլխաւորապէս պառաւ կանայք, զառամեալ ծերեր և փոքր մանուկներ։ Ազատված տղամարդկանց թիւը հազիւ է հասնում 10°/o-ի։ Եկողները Բուլանըխի, Համզաշէխի, Խոզակ, Փերզշէն գիւղերից և Վան քաղաքից են։

Մինչև այժմ շրջանս են հասել մօտ 3000 հոգի. շրջակայ գիւղերը լեփ-լեցուն են. սպասվում է 2000 հ. էլ։

Թշուառ հալածեալներն օրերով մնացել են կայարանի պլատֆորմի վրա անսնունդ և անպաշտպան։ Բազմաթիւ ծանր հիւանդներ՝ անխնամ և կարօտ բժշկական առաջին օգնութեան։

Ներկայումս գաղթականների սնունդի և պահպանութեան ամբողջ հոգսը ծանրացած է գիւղացիութեան վրա, որը հակառակ իր ազգասիրական մաքուր զգացմունքին և անկեղծ ցանկութեան՝ ուղղակի անկարող է հազարաւոր դժբաղդների արցունքը սրբել, քաղցը մեղմացնել, ակարներին մահվան ճանկերից ազատել և նրանց անհուն ցաւերին դարման անել…

Շրջանումս փախստականների օգնութեան գործը գտնվում է անկազմակերպ վիճակում։ Տեղիս «հայկական կոմիտէ» կոչվող մարմինը, շնորհիւ իր սխալ գործելակերպի, գիւղացիութեան շրջանում ժողովրդականութիւն չունի։

Գիւղական նպաստող յանձնախմբերը զուրկ են նիւթական միջոցներից։

Հայկական կենտր. մարմինները և ընկերութիւնները դեռ ևս չեն ուղարկել գաղթականներին դիմաւորելու, իրանց լիազօրները։

Կառավարութիւնը ևս դեռ որևէ գործնական քայլ չէ առել այդ ուղղութեամբ։

Հարկաւոր է անմիջական օգնութիւն։ Օգնութիւն ամեն կերպ, և՛ սննդի, և՛ դեղի, և՛ հագուստի…

Ուշացնելը կամ անուշադրութեան մատնելը՝ մահացու մեղք է։ Ականատես

### II

Ղարաղալա (Կարսի շրջ.). 26 յուլիսի

Խնուսից փախստական հայերը Կաղզվանի ճանապարհով եկել-հասել են Կարսի շրջանի գիւղերը։ Գաղթականների մի խումբ, բաղկացած 150 հոգուց, յուլիսի 25-ին հասաւ Ղարաղալա գիւղը։ Փախստականները ընդհանրապէս ծերեր են կամ մանուկներ՝ այն էլ մեծ մասամբ ակար։ Մէջները հազիւ երեք հոգի երիտասարդ տղամարդ գտնվէր։ Թշուառների գեղեցիկ կանայք առևանգվել էին, իսկ տղամարդիկ սպանվել։ Տկարները դեռ գիւղ չը հասած՝ փռվում էին գետնի վրա, գալարվում ու Աստուծուց միայն մահ էին խնդրում… Մի պառաւ կին, երկու փոքր երեխաների ձեռքերից բռնած, լալիս էր ու ասում.

— Երկու չէն օջախից այս երկու անտէրներն են մնացել…

Ոմանք էլ մրմնջում էին, որ իրանց գերդաստանին ճանապարհին կոտորել են։

Այդ յոգնատանջները իսկոյն գիւղի մէջ պատսպարան գտան։ Ես մօտեցայ, որ նրանցից բան իմանամ։

Մի երկուսը, կիսատ վերմակների տակ մտած, տնքում էին։

— Հիւա՞նդ էք,—հարցրի նրանց։

— Այո, — պատասխանեց մէկը ու իր պղտոր աչքերը բաց արեց։

— Խնուսի ո՞ր գիւղիցն էք,—հարցրի։

— Գոփալ գիւղից։

— Քանի տուն էր ձեր գիւղը կամ քանի հոգի կը լինէր։

— 150 տուն, 1000 հոգուց աւելի։

— Որքա՞նդ կոտորվեցիք և որքանդ փախաք։

— Ոչ բարով պատմէինք,—ասաց մի կին, ու նրա աչքերից արտասուքը հոսեց…

— Ախր ձեզ ինչու էին կոտորում,—հարցրի կնոջը։

— Իմ հէրն ասաց. «Քեաֆիրներն ամեն բան գիտեն, թէ ում տղէն ո՛ր խմբի մէջն է»… Մանուկի տունը 35 հոգի էր, 2 հոգի ջրատար մնաց. Շահօյի Մխօյի տունը 25 հոգի էր, 3-ը մնաց. Բաղդասարի տունը 15 էր, 2-ը մնաց. Թամօ Մալէի տունը 8 հոգի էր, 1-ը մնաց. Յահանի տունը 18 հոգի էր, 3-ը մնաց. Ղրխանի Հակօյի տունը 8 հ. էր, հայ-հոյ՝ 1-ը չը մնաց. Պողօյի տունը 15 հոգի էր, ոչ մինը չը մնաց… Մելօյի տունը 8 հ. էր, 1-ը մնաց։ Ո՞ր մէկն ասեմ,—ասաց ու կրկին աչքերից արտասուք թափեց…

Այդ բազմատանջները միայն մի գիշեր մնացին մեզ մօտ։ Շատերը ոտաբոբիկ ընկան ճանապարհ, որ գիւղից գիւղ գնալով՝ հասնեն Ալեքսանդրոպոլ, որովհետև չէր կարելի կամ գիւղը մնալ կամ Կարս գնալ…

Նրանք գիւղից դուրս եկան, և նոր փախստականների խումբը մտաւ գիւղ, չորս սայլի վրա պառկած հիւանդներով… Բուլանըխեցի էին, Շիրվանշէխ գիւղից։ Սրանց պատմութիւնն աւելի ևս զուլում էր պատկերացնում, քան նախկինը… հարիւրի կէս մասը հիւանդ են։ Շատերը գիւղի պատերի տակ պառկած, աչքերը խուփ, կիսամեռ. մերձաւորները գիւղից հաց, պանիր, կաթ, մածուն են հաւաքում, մրմնջելով ու գուրգուրալով ուզում են հիւանդներին ուտացնել, բայց չեն աջողվում…

Մարտիրոս Ապաճեան

### Հ. ՆՊԱՍՏ. ԸՆԿ. ԼԻԱԶՕՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Հայ Նպաստամատոյց Ընկ. լիազօր Գր. Վարդանեանը Ներքին-Ախտայից յուլիսի 30-ից գրում է հետևեալը յիշեալ Ընկերութեան վարչութեան.

Երէկ առ. ժ. 12-ին հասանք տեղս, որը լինելու է մեր ժամանակաւոր գործավայրը, այսինքն մինչև բոլոր փախստականների տեղաւորվելը որոշ տեղերում, որից յետոյ միայն է օգնութեան գործը կազմակերպել տեղն ու տեղը և աւելի հիմնական կերպով։

Ես աւելորդ եմ համարում կրկնել այն դժբաղդ օրերի պատմութիւնը, քանի որ պ. Համբարձումը մանրամասն զեկուցած կը լինի, այլ հակիրճ կերպով կը զեկուցեմ պ. Համբարձումի մեկնելուց յետոյ եղածի մասին։

Էջմիածնում Եղբայրական Օգնութեան հետ ժողով ունենալուց և որոշ համաձայնութեան գալուց յետոյ, մեկնեցի Իգդիր, ուր իմ ընկերները մի օր առաջ վերադարձել էին. եկել էր նաև Կարաքիլիսէից պ. Թագաչեանը, միւս բոլոր վերադարձողների հետ, որը թէև իր հետ ոչինչ չէր կարողացել բերել մեր՝ Կարաքիլիսէում թողած իրերից, սակայն յոյս էր տածում, թէ մեր 3 հակ կտորները, ինչպէս և մի երկու սնդուկ կահ-կարասիք կը ստանանք։ Այդ պահուն Իգդիր հաւաքված էին արդէն հազարաւոր փախստականներ։ Բոլոր կազմակերպութիւնների ընկերները, անխտիր, աշխատում էինք օգնութեան փութալ. այդտեղի ծախսերն իրանց վրա էին առել Եղբ. Օգնութիւնը և Հ. Կ. Կոմիտէի արշաւախումբը։ Սկզբում, երբ դեռ գործն անկազմակերպ էր, 16 պուդ հաց էլ մենք գնեցինք ու բաժանեցինք. փախստականներին տրվում էր հաց և խաշած միս. մեզնից պ. Գառնիկն ուղարկվեց Մարգարա գիւղը՝ կազմակերպելու հացաբաժանութեան գործը, որ և երկու օր գործը տարաւ, մինչև որ Մոսկվայի արշաւախումբը գործն իր ձեռքն առաւ։

Իմ Իգդիր հասնելուց երկու օր յետոյ եկան նաև Խորէն սրբազանն ու Արսէն հայր սուրբը. գումարեցինք Խորէն սրբազանի նախագահութեամբ ընկերութիւնների խառն ժողով, ուր աջողվեց աշխատանքի բաժանում անել. Իգդիր-Օրգովի շրջանն իր վրա վերցրեց Հ. Կ. Կոմիտէի արշաւախումբը. սակայն այդ րայոնի համար ընտրվեց մի մարմին, Արսէն վ.-ի նախագահութեամբ և Եղբ. Օգն. տեղական ճիւղի անդամներից. պ. Շարաֆեան չը համաձայնվեց մտնել այդ մարմնի մէջ ինչ-ինչ պատճառներով, բայց վերջապէս յանձն առաւ այդ մարմնի ղեկավարութեամբ գործել. այդ օրվանից ծախսերն իր վրա առաւ Եղբ. Օգն. Գլխ. Կոմիտէն, որի ներկայացուցիչ Խորէն սրբազանը 10,000 ր. փող դրեց այդ մարմնի տրամադրութեան տակ։

Մարգարա գիւղում հացաբաժանութեան գործը, ինչպէս վերև ասացի, յանձն առաւ Մոսկվայի արշաւախումբը պ. Յովս. Թադէոսեանի ղեկավարութեամբ։

Կարգադրելով այդ րայոնների գործերը, Նպաստամատոյցի գործելու վայրի որոշումը յետաձգվեց, աւելի նպատակայարմար գտնելով այդ որոշումը տալ Էջմիածնում։ Մենք անմիջապէս մեկնեցինք Էջմիածին, ուր հետևեալ օրը գալու էր նաև Խորէն եպիսկոպոսը։ Մինչ այդ մեր Կարաքիլիսէ թողած ապրանքներից մեր ձեռքը հասաւ 1 հակ կտոր, 1 սնդուկ, որի մէջ էին կարի մեքենան և կոճակները, ինչպէս և մի սնդուկ կարած սպիտակեղէն, որը Էջմիածնից էինք ստացել։ Այդ սպիտակեղէնից մենք տեղն ու տեղը 20 որբ երեխաների հագցրինք, որոնց կենտրոնացնում էինք մի տեղ։

Չը մոռանամ յայտնել, որ Էջմիածնից և Քաղաքների Միութիւնից ստացած հին շորերի մի խոշոր մասն էլ արդէն բաժանել էինք Կարաքիլիսէի սարսափի օրը, իսկ ամբողջ շաքարը կանոնաւորապէս բաժանվել է փախստականներին Կարաքիլիսէից Թաշլի-չայ, աւելի առաջին իսկ օրը. մեր դեղօրայքը ամբողջովին դրեցինք երկու գիւղի (Կարաքիլիսէի մօտ) հիւանդանոցի վարչութեան տրամադրութեան տակ։ Արծափում թողել էինք պ. պ. Յովսէփեանին, Գառնիկին, որ հացի պատրաստութիւն տեսնեն. նրանք թէ Արծափում և թէ Կորօնում, Մոսունում հաց էին պատրաստել, և որովհետև Արծափից չէին եկել փախստականները, այդտեղից հացն էլ փոխադրել էին Կորօնի [illegible] կայանը։

Այժմ շարունակենք մեր ժողովների մասին։

Գալով Էջմիածին, մեզ հետ բերելով ուրեմն 23 հակ կտորեղէն (ընդամենը 24 էր), անմիջապէս դիմեցի Եղբ. Օգնութեան Գլխ. Կոմիտէի նախագահին, խնդրելով ցոյց տալ մեր աշխատանքի վայրը։ Առաջի և այդ օրերում արդէն 2—3000 փախստականներ խմբվել էին Էջմիածնում։ Հայր նախագահը խնդրեց մեզ անմիջապէս աջակցել իրանց հացաբաժանութեան գործին 1—2 օր, մինչև Խորէն եպ.-ը գալով հնարաւորութիւն կունենանք ժողովվելու և վերջնականօրէն որոշելու աշխատավայրերը։ Այդտեղ ևս մեր խումբը իր պարտականութիւնը կատարեց՝ մասնակցելով խմբովին բոլոր գործերին։ Այստեղ էլ հաւաքեցինք 20—25 որբուկներ և մեր ունեցած շորերից բաժանեցինք. տասնեակներով որբեր արդէն հաւաքվել էին Գայիանէի վանքը, ուր նախնական խնամքը յանձն էր առել Մոսկվայի խումբը։

Հետևեալ երեկոյեան Էջմիածին հասաւ Խորէն եպ.-ը, գումարեց ժողով, ուր վճռվեց, որ Մոսկվայի արշաւախումբը գործի Էջմիածնում առ այժմ, Նպաստամատոյց Ընկ. առաջարկեցին վեր առնել, որպէս մշտական գործավայր, Ղըրխ-Բուլաղի րայոնը՝ կենտրոն ունենալով Բանաքեառը. այդ րայոնում տեղաւորվելու են 4—5000 հոգի իրարու մօտիկ մի քանի գիւղում։ Խորէն եպ.-ը շատ սիրալիր վերաբերմունք ցոյց տալով՝ խոստացաւ ամեն աջակցութիւն՝ դիւրացնելու մեր աշխատանքը։ Ես ուրախութեամբ յանձն առայ ու նոյն իրիկունը և եթ ճամբայ ընկանք դէպի Երևան։ Միայն Գառնիկին ուղարկեցի Իգդիր, մի անգամ ևս որոնելու մեր թողած իրերը։ Գալով Երևան, մեր իրերը պահ տուի Եղբ. Օգն. պահեստում։ Այստեղ էլ երկար խորհրդակցելուց յետոյ, որոշեցինք. քանի դեռ փախստականները առաջ գնալու վիճակումն են և Երևանի գծով մեկնողներից, մօտ 25,000 հոգի, Ղըրխ-Բուլաղում հաստատվողները ամենավերջիններն ու յետին չքաւորներն են լինելու (առողջ կամ քիչ թէ շատ կարողութիւն ունեցողները աւելի և աւելի հեռաւոր վայրեր են ուղարկվում), ուստի մինչև այդ ժամանակաւորապէս, գուցէ մինչև 15—20 օր, հաստատվել Ներքին Ախտա գիւղում ու նպաստել այդ տեղից դէպի Դիլիջան, Նոր-Բայազէտ և այլ մօտակայ տեղեր գնացողներին՝ տալով հաց և թէյ։

### ԵՓՐԵՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Էջմիածնից, Յուսիկ արքեպիսկոպոսը յայտնում է, որ վախճանվել է Սինօդի անդամ Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեանը։

Հանգուցեալը, որ դեռ երկու տարի առաջ վարում էր Թիֆլիսի թեմի առաջնորդական պաշտօնը, իբրև ժամանակաւոր կառավարիչ, երկար տարիներ եղել է Թիֆլիսի կոնսիստորիայի նախանդամ, եղել է վանահայր, առաջնորդական փոխանորդ, վանական կառավարութեան նախագահ։ Թիֆլիսից հեռանալուց յետոյ ձեռնադրվեց եպիսկոպոս Իզմիրլեան կաթողիկոսից և նշանակվեց սինօդի անդամ։

Նա բնիկ աշտարակեցի էր, համեստ, բարեբարոյ, գործունեայ եկեղեցական և հանգուցեալ Սաթունեան արքեպիսկոպոսի օրով Թիֆլիսի թեմի կառավարութեան գործում՝ նրա աջ թևն էր։ Իբրև Էջմիածնի սան և աշակերտ, նա միշտ նախանձախնդիր էր Էջմիածնի շահերի։

Վաղուց նա տառապում էր ստամոքսային հիւանդութեամբ, վերջերս նրա հիւանդութիւնը սաստկացաւ և, բժիշկները խորհուրդ էին տալիս նրան գնալ ջրերը և այնտեղ բժշկվել, բայց նա դժուարանում էր հեռանալ Էջմիածնից։ Լինելով Էջմիածնի Եղբայրական Օգնութեան յանձնաժողովի նախագահ, նա մինչև հիւանդութեան սուր կերպարանք ստանալը, երբ ստիպվեց անկողնուց վեր չը կենալ, ամեն օր մեծ աշխատութիւն էր կրում փախստականների համար։

1893 թ. Էջմիածնի կողմից Երուսաղէմ ուղարկված Խրիմեան կաթողիկոսին բերելու համար նուիրակութեան անդամներից մինն էր։

Հանգիստ պարկեշտ և ժրաջան եկեղեցականի ոսկորներին։

### ԱՅՍ Ի՞ՆՉ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԻՒՆ Է

Թիֆլիսում, Վանքի մայր տաճարում մեր սրտի հատոր փախստականները սովամահ են լինում։ Ժողովուրդը փշրում է եկեղեցապատկան շինութեան դռները, որ իր սրտի բեկորներին այնտեղ տեղաւորէ։

Մի՞թէ հրամայողական պահանջ չէ, որ Թիֆլիսի հայ. եկեղ. դպրոցների դռները լայն բացվեն մեր փախստականների համար։ Մի՞թէ չը պէտք է մեր եկեղեցիները իրանց դրամագլուխները, առձեռն դրամները ու ոսկեղէն-արծաթեղէնը բերեն մեր փախստականներին կերակրելու և խնամելու համար։

Տ. Նազարեան

### ԼԱՒ Է ՈՒՇ, ՔԱՆ ՆԵՐԲԷՔ

Հիւանդները կարօտ են խնամքի, փախստականները՝ պատսպարանքի, քաղցածները՝ սննդի, կամաւորները կռւում են դատարկ ստամոքսով, պատառոտված հագուստով և բոբիկ ոտքերով…

Եւ սրանց թիւը տասնեակ հազարներին է հասնում։

---

Կարիքը՜ մեծ է, ազգային մղումը դատարկ։

Իսկ այնտեղ՝ Թիւրքիայում այդպիսիների թիւը բազմապատկվում է ժամերով՝ շնորհիւ կառավարութեան հայաջինջ քաղաքականութեան։

Օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք,—պոռում են մեր թերթերը, մեր գործիչները, մեր ազգասէրները։

Աղաղակի ձայնը թնդացնում է օդը, գուցէ հասնում է մինչև երկինք, բայց չէ հասնում նրանց ականջին, որոնց ուղղված է այսօր բոլոր կարիքաւորների հայեացքը։

Դրանք հայ հարուստներն են և հայ ինտելիգենցիան է։

Սրանք լուռ են, անտարբեր բոլոր կոչերին, նոյնիսկ իրանց հասցէին շպրտվող նախատական բառերին։

Ես հետևում եմ այս կրիտիկական անց ու դարձին և յաճախ հարցնում եմ.

Մի՞թէ սրանք բաւական հայրենասէր չեն, որ արձագանք տան այդ յուսահատական կոչերին։

Մի՞թէ սրանք բաւական պատուասէր չեն, որ շտապեն իրանց ճակատից սրբելու նախատինքի սև դրոշմը։

Կամ գուցէ սրանք չեն հաւատում, թէ այս արիւնոտ պայքարը հայի լինել կամ չը լինելու պայքարն է, որին պարտական է մասնակցելու ամբողջ հայութիւնը՝ ով ինչով և ինչպէս կարող է։

Ես սրանցից ոչ մէկին չեմ հաւատում. չեմ հաւատում մանաւանդ, որ այժմ գտնվի մի շատ ու քիչ խելքը գլխին մարդ, որ դէմ լինի կամաւորական կռւին, որ պնդի, թէ պայքարի վճռական րոպէն դեռ չէ հասել։

Այժմ կամ երբէք։

Մի չնչին երերում կռւող շարքերի, և ամեն ինչ կորած է և կորած անդարձ կերպով։

Օգնութեան մի փոքրիկ յապաղում, Հայաստանը կը մնայ առանց հայերի։

Եւ չէ կարող այդ համազգային կատաստրոֆան տեղի չունենալ, եթէ կռւողների և կռւի հետևանքով կարօտեալների թիկունքին կանգնած չէ ազգն իր պարտականութեան գիտակցութեամբ։

Մի՞թէ սա արևի նման պարզ ու հասկանալի չէ ամենքին։

Բայց ինչու լուռ են, ինչու արձագանք չեն տալիս սրտառուչ կոչերին. ինչու ոչ մի ազդեցութիւն չեն գործում ոչ իսկ նախատական բառն ու խուլ սպառնալիքները։

Ի՞նչ է այս ցաւալի երևոյթի բուն պատճառը. ահա մի հարց, որ կարօտ է հիմնական լուսաբանութեան։

Ո՞վ կարող է պնդել, թէ մարդկային ցեղը պարտաճանաչ է, որ նա ամեն մի հնարաւոր պատրւակ չէ որոնում խուսափելու իր պարտականութիւնից։

Այստեղ ազգի, ցեղի ու դասակարգի խտրութիւն չը կայ, մանաւանդ երբ հարցը դրամական զոհաբերութեան է վերաբերում։

Բայց լինում են րոպէներ, դէպքեր, երբ մարդիկ պատրաստ են ամեն ինչ զոհելու։ Ոգևորվելով ինչ-որ բուռն յափշտակութեամբ, մարդիկ դառնում են անձնուրաց։

Ղեկավարող շրջանների իմաստութիւնից է կախված լիուլի օգտվելու ժողովրդի վառ ոգևորութիւնից. թոյլ չը տալով կամ, ուրիշ խօսքով, առիթ չը տալով, որ ոգևորութիւնը սառչի և ժողովուրդը փախուստի դռներ որոնի։

Համեմատեցէք անցեալ տարվայ հոկտեմբեր-նոյեմբերը այս տարվայ յունիս-յուլիսի հետ։

Այն ժամանակ, երբ ժողովրդի ոգևորութիւնը հասել էր իր գագաթնակէտին, ղեկավարող մարմինները դրութեան տէր դառնալու տենչով էին բռնված։

Այժմ, երբ ժողովրդի ոգևորութիւնն իջնելով՝ նա զանազան պատրւակներով փախուստի դիմեց, ղեկավարող մարմինները՝ ի հարկէ առ հարկի՝ միութեան, համերաշխութեան թմբուկներ են զարկում։

Այսպիսով եթէ դատապարտելի են իրանց սրբազան պարտականութիւնից փախչողները, աւելի դատապարտելի են նրանց առջև փախուստի լայն դռներ բաց անողները։

Առաջիններին դատապարտութեան սիւնին պէտք է գամել մի մեխով, երկրորդներին մի քանի անգամ աւելի մեխերով։

Բայց հայ մամուլը, հայ գրողը, հայ մտաւորը խօսքը մէկ արած դատապարտում են առաջիններին, այն ինչ իսկական յանցաւորների մասին լռութիւն են պահպանում։

Այսպիսով ինքը՝ դատապարտութիւնը դառնում է միակողմանի և դատապարտելի։

Բայց ո՞վ է տեսել, որ իրերի ու երևոյթների խեղաթիւրումով կարելի լինի լաւ հետևանքի հասնել։

Ընդհակառակը՝ այսպէս վերաբերմունքը անդունդն աւելի է խորացնում։

Կոյր պէտք է լինել չը տեսնելու համար, որ գոյութիւն ունի ինչ-որ խուլ պայքար և թէ այդ պայքարը մի լաւ պատրւակ է պարտականութիւնից խուսափելու համար։

Այսօրվայ կռիւը թագաւորող տների կառավարութիւնների կռիւ չէ, այլ ազգերի։ Մեծ պետութիւններն այդ լաւ հասկանալով կռւի ղեկավարութիւնը յանձնեցին ժողովրդին՝ յանձին նրա ընտրեալների։

Ժամանակը չէ, որ ապարդիւն կոչերով ու դատապարտութիւններով ժամանակ կորցնելու տեղը, բաց անենք քարտերն ու ծածկված վէրքերը։

Եգիպտոսում կուսակցական պայքարը խանգարեց Պօղոս-փաշային, Թիֆլիսում նոյն պայքարը խանգարում է Կաթողիկոսին, Վանից լսվեցին կուսակցական նեղսրտութեան դէմ բողոքներ, հէնց այստեղ Թուրքեստանում մի քանի բաղդախնդիրներ սառը ջուր թափեցին ժողովրդի օգնութեան վրա…

Հարցը նրանում չէ թէ՝ տեղի՞ են այս բոլորը թէ անտեղի, այլ նրանում, որ այդ պայքարը խանգարել է գործին ու խանգարում է։

Բանից դուրս է գալիս, որ ներկայ ազատագրական շարժումն իր աստառն ունի։

Մամուլի և գիտակից հասարակութեան պարտականութիւնն է այդ աստառը վերից վար պատռել։

«Արևն» իր վերջին համարներից մէկում Ջրաղացը ջուր թափելու խօսքեր էր արել. իբր թէ հարուստներն ու ինտելիգենցիան չեն կամենում նրան ուժեղացնել ի փառս… ազգի։

Բայց այդ հարուստներն ու ինտելիգենցիան իրանց պարտականութիւնից խուսափելու փոխարէն՝ աւելի լաւ կանէին, որ հանդէս գային ու իրանց ասելիքն ասէին պարզ ու որոշ։

Վճռական րոպէներում վճռական գործողութիւնների պէտք է դիմել, այլ ոչ թէ երերուն ու խուսափողական դիրք բռնել։

Կոչերը՝ մամուլի կողմից և լռութիւնը՝ ժողովրդի կողմից ոչ մի լաւ հետևանքի չեն հասցնի։

Յարաբերութիւնների կծիկը դրանով աւելի կը խճճվի։

Այն ինչ այնտեղ տասնեակ հազարաւորները կարօտ են օգնութեան, այնտեղ ազատագրական պայքարը խոշոր կարիքներ ունի։

Մամուլից ու գիտակից հասարակութիւնից շատ բան է կախված։ Եթէ՝ իրաւ՝ կուսակցական սանձգութիւններ կան և եթէ ճիշդ է, որ այդ սանձգութիւնները հող էին գտել Վանում, ապա պէտք է դաւաճանութեան սիւնին մեխել հէնց այդպիսիներին։

Պէտք է մթնոլորտը մաքրել, հաւատքը, վստահութիւնը վերականգնել։

Չէ որ սա է այն պատրւակը, որով շատերը խուսափում են իրանց պարտականութիւնից։

Օրինակ պէտք է առնել մեծ պետութիւններից և ազատագրական պայքարի գործը պէտք է յանձնել իրան՝ ժողովրդին։

Լաւ է ուշ, քան երբէք։

Ա. Յ. Մուրադեան

Սամարղանդ

## ԲԱԳՈՒԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Կիրակի, օգոստոսի 2-ին, Բագուի Մարդասիրական Ընկերութեան դահլիճում կայացաւ Բագուի հայ հասարակութեան հրապարակական ժողովը, որը զբաղվեց փախստականների օգնութեան գործի կազմակերպումով։

Ժողովը բացեց Մարդասիրականի նախագահ Հ. Տէր-Միքայէլեանը, որը և նախագահ ընտրվեց հանդիսականների կողմից։ Հ. Տէր-Միքայէլեանի ամփոփ զեկուցումից երևաց, որ դեռ անցեալ տարի, Սարիղամիշի դէպքերի ժամանակ, Բագւում ստեղծվել է փախստականներին օգնող մի յանձնաժողով, որը ընդունել է տեղիս Հայկական բիւրոյի հովանաւորութիւնը և գործել է նրան կից, որպէս որոշ աւտոնոմիայով օժտված մարմին։ Այդ յանձնաժողովի մէջ են մտել երկու անդամ այդ բիւրոյից, մի-մի ներկայացուցիչներ Մարդասիրական և Կուլտուրական Ընկերութիւններից, հայ ուսուցչութիւնից, հայ տիկինների խմբից, ապա նաև եկեղեցու երեցփոխը։ Այսպիսի կազմով ստեղծված յանձնաժողովը սկսել է նուիրաբերութիւններ ընդունել, կազմակերպել է երեքօրեայ հրապարակական հանգանակութիւն դրամով և իրերով, ինչպէս և «Հայ փախստականների օր» ժողովարարութիւնը։ Յանձնաժողովի միջոցները պահվել են խառն Հայկական բիւրոյի միջոցների հետ, թէև փախստականների անունով եղած նուիրաբերութիւնները ծախսվել են միմիայն այդ նպատակով։ Հայկական բիւրօն մինչև օրս ունեցել է 400,000 րուբլու մուտք և այդ գումարից փախստականների օգնութեան գործին յատկացվել է 124,000 ր.։ Յանձնաժողովի յատուկ ներկայացուցիչները (սկզբում Եր. Թաղիանոսեան, ապա Գ. Պապեան) շրջագայել են փախստականների վերաբնակված վայրերում և անմիջականօրէն ցոյց են տուել անհրաժեշտ օգնութիւնը։ Այժմ, աւելացնում է զեկուցանողը, փախստականների քանակը բազմացել է։ Անհրաժեշտ է աւելի խոշոր միջոցներ, ինչպէս և նոր օգնող ձեռքեր։ Բագուի հայ հասարակութեան վրա ծանրանում է մերձաւորներին օգնութիւն հասցնելու գործին տալ ըստ հնարաւորութեան աւելի նպատակայարմար ընթացք։

Զեկուցումից յետոյ սկսվում է մտքերի փոխանակութիւն։ Նշմարվում է երկու հոսանք։ Առաջին հոսանքը, որի կողմից խօսում են Պ. Կարա-Մուրզա, Դ. Տէր-Դանիէլեան, բժ. Տ. Իսախանեան, Ն. Տէր-Ղազարեան և ուրիշները, գտնում է, որ պէտք է հիմնովին կերպարանափոխել փախստականների օգնութեան յանձնաժողովը։ Նրանք պահանջում են, որ ստեղծվի փախստականների օգնութեան յատուկ և անկախ մարմին, որ այդ մարմինը կապ չունենայ Հայկական բիւրոյի հետ, քանի որ հայ հասարակութեան որոշ մասը համակիր չէ նման մարմինների քաղաքական գործունէութեան և ներկայ արհաւիրքի պատասխանատւութեան որոշ մասը բարդում է նրանց վրա, որ այդ մարմինների գործունէութիւնը հասկանալի պատճառով ընթանում է առանց հրապարակական հաշւետւութեան, մի բան, որ հանդուրժելի չէ փախստականների օգնութեան գործում։ Այս հոսանքի հետևորդները կոչ են անում, որ փախստականների օգնութեան գործի կազմակերպումը դառնայ համերաշխութեան օղակ ամեն կարծիքի և հոսանքի հայերի համար, որ այդ գործը զերծ պահվի քաղաքականութեան փարած բիւրօների ազդեցութիւնից։ Միանանք բոլորս էլ, ասում են նրանք, մի այնպիսի կազմակերպութեան մէջ, որը մեզ բաժանելու առիթներ չունենայ։

Երկրորդ հոսանքը ջանում է ապացուցել, որ եղած յանձնաժողովը աւտոնոմ լինելով՝ բաժանումների առիթ չէ ներկայացնում, որ յանձնաժողովը և Հայկական բիւրօն միայն ընդհանուր գանձապահ ունեն, իսկ մնացած գործունէութեան մէջ առանձնապէս չեն կապված իրար հետ։ Այդ հոսանքի կողմից խօսողները (Տ. Յովհաննիսեան, Անուշաւան Քալանթար և Հ. Տէր-Միքայէլեան) գտնում են, որ պէտք է միմիայն լրացնել յանձնաժողովի կազմը նոր մարդկանցով։

Հասկանալի է, որ սա համոզիչ չէր կարող լինել առաջին հոսանքի համար, որի նպատակն էր յատուկ և անկախ մարմնի ստեղծումով միմիայն նրա վրա կենտրոնացնել հայ հասարակութեան ուշադրութիւնը։ Այս հոսանքը գտնում էր, որ այժմ մենք մի մտահոգութիւն պիտի ունենանք՝ խնամել փախստականներին։ Բայց երբ այդ գործը կապվում է տարբեր գործունէութեան հետևող մարմնի հետ, դրանով վնասվում է փախստականների խնամատարութիւնը։ Մեզ մօտ ինքնաբերաբար զոհաբերութիւններ չեն լինում. պէտք է բաղխել, որ տրվի։ Սրտ՝ բաղխողը եթէ ինքը Հայկ. բիւրօն է կամ նրա մի յանձնաժողովը, իր դէմքը պարզօրէն չէ յայտարարում դիմումի ժամանակ. դա առաջացնում է շփոթութիւն, և դուրս է գալիս, որ զոհաբերողի ցանկութեան հակառակ նրա նուիրաբերութիւնը ծախսվում է փախստականների օգնութեան հետ առնչութիւն չունեցող նպատակի վրա, նպատակի, որը և որոշ չափով այս արհաւիրքի ծնողն է։

Փախստականների օգնութեան գործի կազմակերպումը երկար վիճաբանութիւնների նիւթ դարձաւ։ Վերջը ընդունվեց այն հոսանքի կարծիքը, որ կողմնակից էր եղած յանձնաժողովի ընդարձակման (115 ձայնով ընդդէմ 37 ձայնի)։ Ապա ընտրվեցին մի շարք նոր մարդիկ։ Անկախ մարմնի կողմնակիցները հրաժարվեցին մտնելու Հայկ. բիւրոյին ենթակայ յանձնաժողովի մէջ, յայտարարելով որ իրանք մինչև օրս իրանց պատասխանատու չեն համարել այդ մարմնի քաղաքական գործունէութեան համար և այսուհետև էլ պիտի պահեն բացասական վերաբերմունք։

Որպէս փաստ՝ յիշատակենք, որ ժողովում բժ. Մ. Մանդինեանը խօսք առաւ արդարացման ճառ արտասանելու յայտնի հոսանքի համար, սակայն նախագահի կողմից նրան արգելվեց շարունակել իր խօսքը, քանի որ ժողովը խուսափում էր մեղաւորներ փնտռել և դատապարտութեան վճիռ արձակել։

Դ. Ա.

Բագու

## ՆՈՐԱՆՈՐ ՍԱՐՍԱՓՆԵՐԻ ԱՌԱՋ…

Ազգիս Վեհափառ Հայրապետը հեռագրում է Աստրախանի Թեմի առաջնորդին նորանոր սարսափների մասին։ Նոյնն է հեռագրում նաև Էջմիածնի Կենտրոնական Կոմիտէի նախագահ Բագրատ եպիսկոպոսը Աստրախանի Հայկական Կոմիտէին և օգնութիւն խնդրում…

Նորից կոտորած, նորից գաղթականութեան նոր հոսանքներ, նորից սով, աւերածութիւն…

Սարսափ, սարսափ են բերում մարդուս երկրից եկած տեղեկութիւնները այն ժամին, այն սրբազան րոպէին, երբ մի կողմից մեր հերոս-կարիճները, գաղափարական ու անձնազոհ մարտիկները ձեռք ձեռքի տուած ռուսաց փառապանծ և քաջամարտիկ զօրքի հետ՝ մատաղ են բերում ամէն, ամեն բան սրբազան հայրենիքի ազատութեան համար և նրանց յաղթական քաջագործութիւններն արդէն աւետում են մեզ, որ մօտ է արշալոյսը, որ նրանց թափած արեան կաթիլների վրա արդէն բուսնում են ծաղիկներ և վարդեր. ահա, ասում եմ, այդպիսի սրբազան մոմենտին, երկրի խորքերից՝ Թիւրքաց տիրապետութեան տակ գտնվող գիւղերից ու քաղաքներից մի սոսկալի ճիչ է լսվում, ճիչ՝ սրի տակ գտնվող անմեղ մանուկների, ճիչ՝ անօգնական, բայց իրանց պատիւը պաշտպանող հայ կոյսերի, ճիչ՝ տղամարդկանց և կանանց…

Այստեղ կարմիր սուլթանը իր վաղուցվայ դժոխային ծրագիրն է իրագործում. Հայաստան առանց հայերի—ահա այդ ծրագիրը։

Հայերի կոտորած… լսել ենք. լսել ենք տարիներ, տասնեակ տարիներ առաջ. լսել ենք մանկութիւնից, թէ այս ինչ սարսափներ, մարդ-գազանների աշխարհում կոտորում են հայերին. լսել են նաև օտարները. լսել են բոլորը… Լսելու հետ միասին մենք խղճացել ենք մեր եղբայրներին, լացել, աղօթել, աղաչել սրտանց-սրտանց, և ուրիշ ոչինչ… Իսկ այսօ՞ր… Այսօր ուրիշ է. այսօր հայերը դուրս են եկել իրանց դարաւոր թշնամու դէմ կռւի. ճակատ-ճակատի տուած նրանք կանգնած են իրանց եղբայր՝ խաչակիր ռուսաց զօրքի հետ միասին պատերազմի դաշտում…

Այսօր հայերի «լինել չը լինելն է» վճռվում…

Այսօր կամ երբէք—ահա հայերիս նշանաբանը։

Եւ հետևանքը այսօր տեսնում ենք. թշնամին կատաղած կոտորում է խաղաղ ազգաբնակութիւնը, գաղթեցնում է նրանց դէպի երկրի խորքը, որպէսզի թէ կլիմայական և թէ ուրիշ աննպաստ պայմանների մէջ սովամահ լինեն, մեռնեն… Այդ բոլորից առաջացել է նոր ահագին գաղթականութիւն, անտէր ու որբ երեխաներ, սով…

Էջմիածինը, Վեհափառ Հայրապետը գուժելով այս սարսափների մասին իր զաւակներից, իր հօտից օգնութիւն է խնդրում…

Աստրախանի հայերն իրանց եղբայրներին օգնութեան գալու նպատակով հէնց սկզբից ամսական տուրք նշանակեցին և Աստրախանի Հայկական Կոմիտէն արձագանք էր տալիս երկրից եկած պահանջներին, ուղարկելով իր ժողովրդից հաւաքած կոպէկները…

Սակայն այսօր երկրից նորանոր սարսափների ձայներ են լսվում, Կովկասից և ուրիշ տեղերից ինտելիգենտ ույժեր, ուսուցիչներ, բարձր դասարանի աշակերտներ անցնում են գրաված երկիրները՝ զանազան մանկատուն կենտրոններ հիմնելու և ուրիշ կարող օգնութիւններ հասցնելու… Բայց ցաւօք սրտի պէտք է ասել, որ այսպիսի ծանր և կարևոր րոպէին Աստրախանի Հայկական Կոմիտէն զգալի օգնութիւն հասցնել դժուարանում է, որովհետև ժողովրդի մէջ ինչ-որ, կարծէք թէ, յոգնածութիւն և վհատութիւն է նկատվում։

Իբրև արձագանք Էջմիածնից ստացված հեռագրի՝ Աստրախանի Կոմիտէն ուղարկեց իր գանձարանում եղած գումարներից 3000 րուբլի։

Աստրախանի հայ եղբայրներ, դժուար րոպէներումն ենք ապրում ընդհանրապէս և մասնաւորապէս մենք՝ հայերս… Այսօր կամ երբէք. մի մոռանաք այս նշանաբանը։ Եթէ այսօր չանենք, ուրեմն երբէք չենք անի… Ո՛հ, սարսափում եմ ես այս «երբէքից». դա գիտէք ինչ է նշանակում. դա նշանակում է թաղել մի ամբողջ ազգ, խաչ դնել նրա գոյութեան վրա…

Ոճրագործութիւն է. ազգասպանութիւն է. չէ… Եւ այդ ոճրագործութեան մէջ մենք բոլորս պէտք է մասնակցութիւն ունենանք։

Ժամանակը չէ մարդկանց պակասութիւններով և քննադատութիւններով զբաղվելու. հարկաւոր է միանալ, մի սիրտ, մի հոգի դառնալ և օգնութեան գալ ով ինչով կարող է…

Ձեզանից արիւն, անձնազոհութիւն չի պահանջվում…

Ձեզանից կեանք, աշխատանք, քրտինք չի պահանջվում…

Ձեզանից միայն օգնութիւն, նիւթական օգնութիւն է պահանջվում, փող. այն էլ ոչ թէ ձեր վերջինը, այլ թէկուզ ձեր աւելացածը, ձեր փշրանքները…

Օգնութեան հասէք և մի կարճէք այս կամ այն անտեղի պատճառաբանութիւններով ձեր գթալից ձեռնարկութիւնը—ամսական տուրքի տուողութիւնը…

Թէև մեր եղբայրների սարսափները օրէցօր աւելանում են, թէև նորանոր գոյժեր ենք լսում երկրից, բայց մենք չենք յուսահատվում. մենք հաւատում ենք մեր լաւագոյն ապագային…

Մենք հաւատում ենք մեր մայր երկրի ազատութեանը, իր զաւակների թափած արեան և ռուս քաջարի զօրքի միջոցով։ Մենք հաւատում ենք և հաւատացած օգնութեան կոչ ենք անում մեր եղբայրներին։

Օգնենք, որպէսզի ապագայում ազատված իրաւունք ունենանք մեր ցեղի հարազատ, այլ ոչ խորթ զաւակը համարվելու…

Աստրախան Ս. Ք. Ասլանեան

## ՏՆԱՏԷՐԵՐԻ ԿԱՄԱԿՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Որքան ստուարանում է քաղաքի ազգաբնակութեան թիւը, այնքան էլ լայնանում վարձով տրվող բնակարանատէրերի ագահութիւնը և կոպտանում նրանց մի որոշ մասի կամակորութիւնը։ Շնորհիւ վերջին դժբաղդ անցքերի՝ Թիֆլիսը ևս լցվել է գաղթականներով։ Նրանցից ոմանք ապաստան են գտնում իրանց ծանօթ-բարեկամների մօտ, բայց իսկոյն հրապարակ է դուրս գալիս տան տէրը և դուրս անելու սպառնալիքի տակ առաջարկում աւելացնել բնակարանի վարձը, աւելորդ մարդիկ ապրեցնելու պատճառով։ Մի ուրիշը ոչ մի կերպ և ոչ մի գնով չէ ուզում իր բնակարանը վարձով տալ այն ընտանիքին, որը բաղդաւորութիւն կամ դժբաղդութիւն ունի մի քանի երեխայ ունենալու։ Երրորդը առանց որևէ պատճառի ուզած օրը դուրս է վռնդում կենւորին, եթէ սա չէ համաձայնում աւելացնել բնակարանի վարձը։ Եւ այսպէս անվերջ, ով ինչպէս կամենում է, այնպէս էլ վարվում է իր թէկուզ հէնց ամենաանպէտք և խուլ-մութ «օթախում» բնակվող վարձակալի հետ։ Հալաբարում, օրինակ, տնատէր գինեվաճառ Իլո Դուրգլիշվիլին, որպէսզի ստիպէ վերջապէս որ իր տանն ապրող Ի. Ի-շվիլին աւելացնէ բնակարանի վարձը, վերցնում է և իր ձեռքով պոկում Ի-շվիլու բնակարանի սանդուղը, որը և ստիպված է կամ աւելացնելու, որ սանդուղը տեղը դրվի, կամ բնակարանը դատարկելու։ Մի՞թէ քաղաքային վարչութիւնը հնար չունի այդ տեսակ կոպիտ բռնակալութիւնների և ընդհանրապէս բնակարանային բարդ խնդրի վրա հոգածութիւն նշանակելու։ Բ. Մ.

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

### Ընդհանուր դրութիւնը

Մեղրի, 1 օգոստոսի

◆ Անտանելի դրութիւն է. աշխատող ձեռքերի պակասութիւնը, մթերքների անասելի թանգութիւնը, աւազակային խմբերի օր ցերեկով յարձակումներն ամեն կողմից ճնշում են գիւղացիներին։ Մեղրեցին գլխաւորապէս ապրում է դրսից, իր օտարականներից ստացած փողով, բայց այս տարի դրսից համարեա փող չէ մտնում գիւղ։

◆ Ընդհանուր դրութեան լարված լինելն ուղղակի սպանիչ ազդեցութիւն ունի. գիւղացին հանգիստ սրտով աշխատել չէ կարողանում, ամեն րոպէ նորանոր լուրերի է սպասում և իր ապագայի մտորումներով տարված՝ ոչինչ չէ գալիս նրա ձեռքից։

◆ Տեղումս գոյութիւն ունեն շրջ. ուսուցչ. և գիւղական տղամարդկանց ու կանանց կոմիտէները, որոնք, պիտի ասել, բաւական լաւ գործունէութիւն ունեն և ամեն կերպ աշխատում են օգնած լինել գլխաւորապէս անապաստան փախստականներին։

◆ Շատ շուտով տեղումս կը բացվի պոստային բաժանմունք, որը շատ օգտաւէտ է մանաւանդ այժմ, երբ մեր ճանապարհներով գնալ-գալը շատ վտանգաւոր է առանց կառավարական զինված պահակների, որովհետև սահմանապահ զինւորներ չը կան։

◆ Դպրոցական գործը մեզանում այս տարի փայլուն էր։ Գիւղացիութիւնը, շնորհիւ տեղի ունեցած ծնող. ժողովների, իրազեկ էր դպրոցական գործին և ջերմ հետաքրքրութիւն էր ցոյց տալիս։ Շնորհիւ աւ.-ուսուցիչ Արշ. Տէր-Յովհաննեսեանի ջանքերի, կանոնաւորվեց և կեանք ստացաւ անցեալներում՝ շնորհիւ ապիկար ույժերի քայքայված և մեռած դպրոցը։ Ինչպէս տեղեկացանք, հոգաբարձութիւնը բանակցում է կրկին հրաւիրելու պարոնին աւելի լայն իրաւունքներով։ Տեղացի

### Պարտազանց համայնք

Սղնախ, 26 յուլիսի

Լագոդեխի ծխատէր Բ. ք. Սուքիասեանը 6 տարի առաջ տեղափոխվեց Թելաւ։ Մի տարուց յետոյ նա դարձեալ եկաւ Լագոդեխ այն պայմանով, որ Լագոդեխի հայ հասարակութիւնը համախոսականով պարտաւորվեց տալ հ. Սուքիասեանին մշտական ցմահ 300 ր. տարեկան ռոճիկ, բացի քահանայական եկամուտներից։ Երկու տարի անցնելուց յետոյ՝ հասարակութիւնը դրժեց իր պայմանը և չը տուեց քահանային պայմանաւորված ռոճիկը։ Քահանան բողոքեց Լագոդեխի ժողովրդի դէմ կոնսիստորիային, որը պարտաւորեցրել է Սղնախի գործակալին քննել քահանայի բողոքը։ Այս գործի համար Լագոդեխ գնաց մեր գործակալը։

Առ հասարակ, հայ ժողովուրդը, որը գանգատվում է քահանաների և ուսուցիչների վրա յաճախ, միշտ ինքն է մեղաւոր դրամական հարցերում, որովհետև նա փող չէ ուզում տալ և զանազան պատրւակներով հրաժարվում է իր պայմանը կատարելուց։ Մեր ժողովուրդը հնազանդվում է միայն մտրակին և պոլիցիային։ Նա հոգևոր իշխանութիւնից չէ վախենում, որովհետև համոզված է, որ հոգևոր իշխանութիւնը չի կարող պատժել իրան և ինքը կարող է կատարել և անց կացնել ամեն տեսակ բռնութիւններ, կոպտութիւններ և կամայականութիւններ։

Նման հարց գոյութիւն ունի նաև Ցարսկիէ-Կոլօդցիում։ Վեց տարի առաջ այստեղ բացվեց հայոց դպրոց, որի պահպանութեան համար հայ հասարակութիւնը համախոսականով պարտաւորվեց մշտական տալ դպրոցին տարեկան 250 ր., բացի թոշակներից։ Հասարակութիւնը դրժեց իր համախոսականը և չը տուեց պարտաւորված դպրոցական տուրքը։ Ժողովուրդը պարտ է դպրոցին մօտ 1000 ր.։ Դպրոցը պահպանվեց 6 տարի գլխաւորապէս կողմնակի աղբիւրներով, որի համար շատ աշխատեց տեղական քահանան։ Եթէ չը լինէին այդ աղբիւրները, դպրոցը կը փակվէր։ N. N.

### Նախանձի հետևանքով

Նոր-շէն (Շուշու գաւ.), 29 յուլ.

Ամսիս սկզբում Բագուից ժամանեցին այստեղ մեր համագիւղացի Բագուի ծխատէր Ն. ք. Տէր-Կարապետեանը և գիւղիս նոր բարերար Ն. Բ. Վարդանեանը, որ նուիրաբերել է հ. Տէր-Կարապետեանի միջոցով 10,000 ր.՝ գիւղումս դպրոցական սեփական շէնք կառուցանելու համար։ Մեր հիւրերը անմիջապէս գիւղական ժողով կազմեցին և նախ հաղորդելով ժողովրդին նուիրաբերութեան մասին՝ առաջարկեցին տեղի ընտրութեան համար մտածել։ Ժողովը միաձայն նպատակայարմար համարեց գիւղից նորակառոյց եկեղեցուն կից՝ Հացիկ գիւղի վարելահողերի տէրերից խնդրել մի դեսեատին տարածութեամբ հողաբաժին, որը գտնվում է գիւղիս եկեղեցու արևմըտեան պատից միմիայն մի սաժէն հեռաւորութեան վրա գետինը և դիրքը շատ յարմար, միայն մի ճանապարհ է բաժանում Հացիկ գիւղի հողերը մեր գիւղից։ Այս մասին որոշվեց մի դեսեատին հողի դիմաց նոյն՝ չափով հողատէրերին Նոր-շէնի սահմանակից հողերից ընտիր հող տալ կամ դրամով վարձատրել. Այդ առիթով ընտրվեցին ներկայացուցիչներ և ուղարկվեցին Հացիկ գիւղի բնակիչների մօտ՝ բանակցութեան համար։ Սակայն, դժբաղդաբար, Հացիկի գիւղացիք ոչ մի կերպ չը ցանկացան զիջել։

Պատգամաւոր գնաց և ինքը բարերար Վարդանեանը իր հարազատ քեռիների մօտ, որոնք Հացիկի ազդեցիկներն են. սրանք ևս մերժեցին։ Այս տարօրինակ և չար երևոյթը միանգամայն զարմացրեց ամենքին, նոյն իսկ հարևան թուրք գիւղացիներին, որոնք դիպուածով իմացան այս մասին։ Ստիպված՝ հ. Տէր-Կարապետեանը և բարերար Վարդանեանը գնացին Շուշի, յոյս ունենալով պատշաճաւոր իշխանութեան միջոցով աջողեցնել փոխել կամակոր գիւղի վայրենի անտարբերութիւնը։

Ամսիս 27-ին, կիրակի, ժամերգութիւնից յետոյ, գիւղիս նորակառոյց եկեղեցում, հանդիսապետութեամբ հ. Տէր-Կարապետեանի, տեղի ունեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ խուռն բազմութեան ներկայութեամբ՝ նոր բարերար Ն. Վարդանեանցի ծնողաց յիշատակին, նոյնպէս բագուաբնակ Բ. Յակովբեանցի ծնողաց, որը գրաւորապէս, նոյնպէս հ. Տէր-Կարապետեանի միջոցով, յանուն Ղարաբաղի թեմի կառավարչի՝ խոստացել է տարեկան 800 ր. նոյն դպրոցի ուսուցիչների թոշակադրամ տալ։ Հոգեհանգիստը տեղի ունեցաւ նոյնպէս՝ մեր նորակառոյց եկեղեցու շինութեան նպաստող բոլոր բարերարների ծնողաց և Նորերս ս. Խաչ վանքում վախճանված Վահան վ. Տէր-Գրիգորեանցի յիշատակին, որը նախքան բարձր պաշտօններ ստանձնելը եղել է գիւղումս ուսուցիչ և հիմնադիր նոր ուղղութեան դպրոցի։ Հոգեհանգստեան առիթով խօսեց հ. Ներսէսը։

Սուրէն Պահլաւունի

## ՄԻ ՊՏՈՅՏ ՎԱՐԱՆԴԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ԳԻՒՂԵՐՈՒՄ

Յունիսի վերջերին պատահաբար այցելեցի Վարանդայի մի քանի գիւղերը։

Այս տարվայ անընդհատ տեղացող անձրևները, տեղ տեղ կարկուտը խեղճ գիւղացու վիզը թողել են ծուռը։

Անցնում ենք Դաշուշէն, Բառաժնի, Հարար, Կղարծի, Աւետր, Աշան գիւղերը, ամենուրեք ցորենի և գարու արտերը փչացած, մարդաբոյ ցորենի հասկը դատարկ, կամ կարկուտը առանց քրտնքի հնձել է արդէն։

Մտենում եմ խեղճ գիւղացուն և հարցնում նրա դրութիւնը։ Նա ձեռը ծոցին դրած՝ մի ծանր շունչ է քաշում.

— Է՛հ, լօխ էլ մատաղ քընա մեր կրակի ռէխին կանգնած խօխացը, մենք կապրենք։

Անցնում եմ Սպիտակ-շէնը, յանկարծ աչքս ընկնում է տերևաթափ, ճղակոտր ծառերին. մի սուր ճնշում եմ զգում ներսս։ Անցնում եմ Գիշի գիւղի ծեծված արտերից. անցայ Աւետարանոցի և Մուխշումհատի ազատ մնացած արտերի միջով։ Այստեղ հնձւորները ուրախ-ուրախ ընդունում էին մեր բարևները։

Երեկոյեան ժ. 6-ին մի խումբ ուխտաւորներ մտանք պատմական Ամարասի ս. Գրիգորիսի վանքը, ուր հետզհետէ գալիս էին շրջակայ գիւղերից ուխտաւորները։

Պատեհ առիթի թողնելով վանքի մասին խօսելը, այսքանը կասեմ, որ վարելահողերով, այգիներով հարուստ այդ վանքը իր տարեկան հարկը չի կարողանում վճարել, որովհետև մասնաւոր զօշաղ մարդիկ հետզհետէ տիրելով վանքապատկան կալուածներին՝ արդիւնքը վերցնում են, իսկ հարկատուն մնում է վանքը, որի առիթով թեմի կառավարիչ Զաւէն վ. դատ է բացել նահանգական դատարանում և յոյս կայ որպէս իրաւատէր շահելու դատը։

Մտնում եմ ուխտաւորների մէկ կամ միւս խմբին. ամենքի սիրտն էլ կոտրած է։ Նրանցից մէկը արցունքով լիքը աչքերը բարձրացնում է և ասում.

— Ջանս քի մատաղ. կըղէթներում բաշըւղի մհար հինչ կայ, պա էս կախինըը հեր ա պրծնելու։

Մէկի եղբայրն է կռւում, միւսի ամուսինը, տղան և այլն։ Ծիծաղելի և ցաւալի է միանգամայն՝ լսելը, թէ ինչպիսի աղաւաղված բառերով են արտասանում աւստրիական և գերմանական քաղաքների անունները, ուր կռւում էին, կամ գերի են ընկել իրանց սիրելիները։ Տխուր տպաւորութիւններով հեռացայ Ամարասից։

Չը մոռանամ ասելու, որ «Վարդավառին վանքումն էր և Ղարաբաղի թեմի կառավարիչը, որը, եթէ չեմ սխալվում, վանքապատկան կալուածների գործով էր այցելել վանքը։

Սակայն ժողովրդի այս լքված ժամանակը՝ ցանկալի է, որ հոգևոր իշխանաւորները յաճախ այցելէին նրան և իրանց բարոյական յորդորներով մխիթարութիւն պատճառէին։

Հետևեալ օրը վերադառնում եմ Գիշեր։

Սրտագին ընդունելութեան եմ հանդիպում նախկին աշակերտներիս և սրանց ծնողների կողմից։

Կրկին առաջին հարցը պատերազմն է. ամեն տեղ աւերածներ։ Մի շաբաթ մնացի գիւղում, որտեղից առէք որ նամակներ ցոյց չը տային, հարցերին տեղի մասին, թէ արևմտեան և թէ կովկասեան ճակատներից, իւրաքանչիւրին մի-մի մխիթարական խօսք ասելով, նամակների ուշ գալու պատճառները բացատրելով՝ յուզված հեռացայ Գիշեր։

Բարեբաղդաբար լաւ են Մուշկապատի մի մասը, Հաղորդի, Ղուտան և Ներքի գիւղերի ցորենները, իսկ Դոնաւադի և Շոշի արտերը նոյնպէս վնասված են։

Սաթ. Զաքարեան

## ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

Պետրօգրադ, 3 օգոստոսի

Հերթի է դրված մինիստրների խորհրդի նախագահին և ներքին գործերի մինիստրին ուղղված հարցապնդումը՝ ռազմական գործողութիւնների վայրերում բնակվող հրէաների վերաբերմամբ կառավարութեան կողմից կատարված ապօրինի գործողութիւնների մասին։ Ձխէիձէն պաշտպանելով հարցապնդումի շտապողականութիւնը՝ ասում է, որ կառավարութիւնը միշտ, իսկ առաւել ևս կրիտիկական մոմենտներում հիմնվել է հրէաների անպաշտպան դրութեան վրա։ Նա այժմ էլ առաջ է քաշում հրէաների դէմ դաւադրութեան և դաւաճանութեան մեղադրանք։ Բայց յանուն ո՞ր օրինականութեան մի ամբողջ ժողովուրդ պատասխանատու պիտի լինի այն, գուցէ և ծանր, յանցանքների համար, որ գործել են մասնաւոր անհատներ։

Ձիլիբինսկին, պաշտպանելով շտապողականութիւնը, մատնանշում է, որ մի ամբողջ ժողովուրդ դրված է ոճրագործների և աքսորականների դրութեան մէջ, և յայտնում է, որ աքսորելու ժամանակ թոյլ են տրվում աւելորդ խստութիւններ և ծաղրանք։ Ներկայումս բանտում գտնվում են 400 պատանդ, վերցված հրէայ ազգաբնակութեան մէջ յարգանք և պատիւ վայելող անձանց թւից։

Քուէարկութեամբ հարցապնդումի շտապողականութիւնը մերժվում է և ընդունվում է առաջարկութիւն, որին ձայնակցում է Ձխէիձէն, նշանակել մի մասնաժողով, որը երկու շաբաթվայ ընթացքում պիտի ներկայացնէ զեկուցում։

Կերենսկին յայտարարում է, որ աշխատաւորականները ձայն են տալու ընդդէմ՝ աջակողմեաններից առաջարկված մասնաժողովի, գտնելով այն ամենավնասակար դեմագոգիա։ Տնտեսական կեանքում ազգային ճնշում չէ կարող տեղի ունենալ. այստեղ իշխում է միայն դասակարգերի տնտեսական կռիւ։ Դրա ապացոյցը հռետորը տեսնում է փետրվարի 2-ի օրէնքում, որով օգտվել են՝ գերմանացի գիւղացիներին պատկանող հողերը խլելու համար։ Մինչդեռ ազնուականներին պատկանող հողերին ձեռք չեն տալիս։ Գալով գերմանական կոլոնիստներին, հռետորը մատնանշում է, որ նրանք կոչված էին Եկատերինա Մեծի օրով՝ բնակութիւն հաստատել անմարդաբնակ վայրերում. նրանք ստեղծել են մի ամբողջ կուլտուրա. ներկայումս էլ ռուս գիւղացիներին թշնամացնում են նրանց հետ, որպէսզի ժողովրդի ուշադրութիւնը շեղեն իսկական թշնամիների վրայից։ Առաջին Դումայի խափանումը, հռետորի ունեցած տեղեկութիւնների համաձայն, կատարվել է ոչ առանց Բեռլինի ազդեցութեան, իսկ Ստոլիպինը ոչնչացրեց ռուս գիւղացիական կենցաղը և մտցնում էր գերմանական կարգեր։ Գիւղացիների միաժառանգութեան օրէնքը ճիշդ և ճիշդ վերցված է գերմանացիներից և նպատակ ունի ապահովել թէ ռուս և թէ գերմանական ազնուականներին։ Հռետորը քաղուածներ է անում 1906 և յետագայ տարիների լրագիրներից, ուր ակնարկվում է Գերմանիայի և Աւստրիայի կողմից՝ ընդդէմ ռուս յեղափոխութեան՝ միջոցներ ձեռք առնելու մասին։ Մասնաժողով ստեղծելու առաջարկութեան հեղինակները, այսինքն աջակողմեանները, անմիջապէս պատերազմից առաջ Գերմանիայի կողմն էին բռնում և արտայայտվում էին Անգլիայի դէմ։ Գերմանացիները ուժեղ ազդեցութիւն ունէին մեր կառավարութեան վրա։ Այսպէս, Պլեվէն կարևոր էր համարում զիջումներ անել Գերմանիային առևտրական պայմանագրի հարցում, որովհետև Բեռլինի կառավարութիւնը միշտ ուշադիր էր դէպի մեր ներքին գործերի մինիստրութիւնը։ Գերմանական ճնշման թէման շատ վտանգաւոր է։ Գալով ներքին գործերի մինիստր Ջունկովսկու բացատրութեանը, Կերենսկին գտնում է, որ նա կարող էր բոլորովին չը պատասխանել, որովհետև մեզանում մինիստրները պատասխանատու չեն, և հարցնում է, թէ ինչու է ընդհատված գերմանական նուաճման համար հանգանակութիւն հաւաքելու գործի դատավարութիւնը։

Շարունակվում է գերմանական բռնութեան դէմ կռուելու համար յանձնաժողով կազմելու հարցի շուրջը եղած վիճաբանութիւնը։

Խօսում են բարոն Մէյէնդորֆ, Ադրիանովսկի, և այլք։

Տարասովը գիւղացիական խմբակի կողմից յայտնում է, որ գիւղացիները պէտք է ձայն տան յօգուտ յանձնաժողովի կազմութեան։ Գիւղացիները հողի կարիք ունեն, իսկ գերմանացիները բռնում են 2.755.000 դեսեատին։ Գիւղացիները կարծում են, որ բոլոր առևտուրը և արդիւնաբերութիւնը պէտք է վերցվի գերմանացիների ձեռքից և գերմանացիները պէտք է հեռացվեն իրանց պաշտօններից։ Գերմանական բռնութիւնից ազատվելը գիւղացիները հաւասարեցնում են 1861 թ. ճորտութիւնից ազատվելու հետ։

Վերշինին յայտնում է, որ աշխատաւորականները ձայն են տալու թանգութեան դէմ կռուելու յանձնաժողովի կազմակերպութեան օգտին, թանգութիւն, որ հետզհետէ աճում է մեզանում։

Նոյն հարցի մասին խօսում է Կարաուլովը։

Ընդունվում է հարցը քննելու համար երկարացնել նիստը։ Խօսում են Մարկով 2-դ, հայր Պոկրովսկի և Միլիւկով։

Հայր Պոկրովսկի մատնանշում է այն բանի վրա, որ ժողովուրդը խիստ յուզված էր, երբ լսեց, որ մեր անաջողութիւնների պատճառը մեր անպատրաստութիւնն է եղել։ Ընտրողները,—ասում է հռետորը,—Դումայի համար իրանց ընտրած պատգամաւորների առաջին պարտաւորութիւնն են համարում, որ նրանք ամեն տեսակ միջոցներ ձեռք առնեն նրա համար, որ զօրքը ռազմամթերքը շատ ստանայ. ընտրողների միւս ցանկութիւնը կայանում է նրանում, որ զօրքի մատակարարութեան գործին վերահսկող և կառավարող լինեն զուտ ռուս մարդիկ։ Հռետորը հաւատում է, որ ռուսական գերմանացիների շրջանում կան շատ միանգամայն բարեխղճական մարդիկ, բայց գտնում է, որ ժողովրդին հանգստացնելու համար անհրաժեշտ է գործի գլուխ կարգել զուտ ռուս մարդկանց, իսկ օտարները, առանձնապէս գերմանացիները, պէտք է հեռացվեն պաշտպանութեան գործից։

Միլիւկովը, հարց տալով թէ ինչով պէտք է զբաղվի ծրագրվող յանձնաժողովը, գտնում է ամենից առաջ, որ գերմանական ազդեցութիւնը արդիւնաբերութեան շրջանից վերացնելու հարցը առաւել բարդ է, քան կարծում են Խվօստովը և նրան ձայնակցող հռետորները։ Բանը նրանումն է, որ Գերմանիան Ռուսաստանից կէս դար առաջ երկրագործ երկրից դարձաւ արդիւնաբերական, և այստեղ բուսաւ նրա ազդեցութիւնը. դրա համար բաւական չէ հարց դնել գերմանական ճնշման մասին, որպէսզի Ռուսաստանին գրեթէ կէս դար առաջ մղենք. մեր արդիւնաբերութիւնը ընդհանրապէս օտար կապիտալից ազատելու հսկայական կարևորութիւն ունեցող հարցով զբաղվել յանձնաժողովը չի կարող։ Ինչ վերաբերվում է ամբիոնից լսված բողոքներին՝ Գերմանիայի կուլտուրական ազդեցութեան մասին, Միլիւկովը գտնում է, որ այդ արտասանել՝ նշանակում է կռուել սեփական պատմութեան դէմ։ Միլիւկովը յիշեցնում է, որ 100 տարի առաջ, հայրենական պատերազմին, երբ հայրենասիրութեան բռնկումը Ռուսաստանում ոչ պակաս ուժեղ էր, քան այժմ, ոչ ոք չէր բողոքում ֆրանսիական կուլտուրայի ազդեցութեան դէմ, որ կար առաջ և շարունակվեց յետոյ։ Միլիւկովը կարծում է, որ եթէ իւրաքանչիւր պատերազմից յետոյ նոր թշնամու հետ ջնջվէր այն երկրի կուլտուրական ազդեցութիւնը, որին պատկանում է այդ թշնամին, այն դէպքում ռուսական կուլտուրայի պատմութեան անցեալը կը փոխվէր և ապագայում նա կը դառնար նշանաւոր չափով աղքատ. այդ պատճառով, Միլիւկովի կարծիքով, կռիւ գերմ. ճնշման դէմ՝ չը պէտք է կռիւ լինի կուլտուրայի դէմ, որով Գերմանիան կատարել է անգին բարենպաստ դեր։ Դառնալով Գերմանիայի ռուսական պետական կեանքում կատարած դերին, Միլիւկովը ընդունում է, որ նրա ազդեցութիւնը այստեղ միշտ էլ բարենպաստ չի եղել և հետզհետէ դարձել է կործանարար. բայց Միլիւկովը այստեղ ամեն ինչ մի գոյնով չէր ներկի, որովհետև միայն XIX դարից ներքին գերմանացին ծառայութեան է մտնում իշխանութեան մէջ, կռուելու հասարակութեան դէմ, դրա համար ստանալով կարիէրա, պալատական ազդեցութիւն և տեղական արտօնութիւններ։ Ահա այս ներքին գերմանացիների դէմ է որ ժողովուրդը, նոյնպէս և կադետների ֆրակցիան բողոքում է ամբողջ հոգով։ Դառնալով գերմանական հպատակների այժմեան դրութեանը Ռուսաստանում, Միլիւկովը չէ ուզում պաշտպանել հանգուցեալ Մարտէնսի և Բարձրագոյն հրամանի թեզիսը, որ հրատարակվեց թիւրքաց պատերազմից առաջ այն մասին, թէ մեզ հետ կռւող պետութիւնների քաղաքացիները պէտք է միան երկրում, որ զբաղվեն սովորական խաղաղ աշխատանքներով։ Կռիւը այժմ մղվում է այնպիսի միջոցներով, որոնք քայքայում են միջազգային իրաւունքի սկզբունքները, բայց և այնպէս Միլիւկովը կարծում է, որ իշխանութիւնը գերմանական լրտեսութեան մասին ունեցած իր վախի մէջ շատ աւելի առաջ գնաց, քան հարկաւոր էր, և աւելի հեռու է գնում Դումայի մի մասը, որի առաջ իշխանութիւնը տեղի է տալիս։ Միլիւկովը բողոքում է թշնամի պետութիւնների հպատակների նկատմամբ գործ դրված խիստ միջոցների և ազգային անհամբերութիւն յարուցելու դէմ։ Շօշափելով գերմանացի կոլոնիստների դրութիւնը, Միլիւկովը յայտնում է, որ ինքը զարմացած մնաց ներքին գործերի մինիստրի ցուցմունքից, թէ անհրաժեշտ է ասսիմիլիացիայի ենթարկել ռուսական գերմանացիներին, և աւելի զարմացաւ այն ցուցմունքից, թէ շտունդիստները վտանգաւոր մարդիկ են։ Միլիւկովը հրաւիրում է Դումայի ուշադրութիւն դարձնել այդ հարցի վրա։ Վերջում Միլիւկովը յայտնում է, որ կադետների ֆրակցիան ձայն է տալու յանձնաժողով կազմելու, բայց այնպիսի յանձնաժողովի, որը պէտք է կռւի այն տենդենցի դէմ, որով հանդէս են գալիս մարդիկ, կազմել այն, և պէտք է կռւի իրաւունքի արդարութեան և ռուս ժողովրդի իրաւունքի համար։ Բացի այդ՝ Միլիւկովը առաջարկում է այլ կերպ կոչել ռուսական օտար հպատակների ծագումը։

Միլիւկովի առաջարկութիւնը՝ յանձնաժողովի փոփոխութեան մէջ ուղղում մտցնել՝ մերժվում է 124 ձայնով ընդդէմ 60 ի։ Հիմնական առաջարկը՝ երկու յանձնաժողով ընդունելու մասին՝ ընդունվում է։

Հետևեալ նիստի օրվայ մասին կը յայտարարվի առանձին ծանուցագրերով։

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ԹԻՖԼԻՍ

◆ Փոխարքան միջնորդութիւն է յարուցել, որ ժողովրդի կրթութեան կարիքը բաւարարելու համար Մակուի խանութեան մէջ և Ռուսաստանին մօտ խանութիւններում դպրոցներ բացվեն։

◆ 1896 թւին ծնված երիտասարդ նորակոչ զինւորացուները վիճակահանութեան են հաւաքվելու այսօր։ Գաւառներից արդէն եկել են նորակոչ երիտասարդները։

◆ Անցեալ օրը քաղ. լազարէթներից Հիւսիսային Կովկաս փոխադրվեցին մեծ խմբով վիրաւոր և հիւանդ զօրականներ։

◆ Օգոստոսի 15-ին ուղղափառ հոգևորականութիւնը կատարելու է եկեղեցական թափօր Թիֆլիսի փողոցներում։

◆ Թիֆլիսի ռէալական դպրոցում ձեռք են առնում ամեն միջոցներ, որպէսզի ուսումնական զբաղմունքները սկսվեն իր ժամանակին։ Եթէ դպրոցի շինութեան մէջ զետեղ. զինւորական 392-րդ հիւանդանոցը փոխադրվի օգոստ. 15-ին, այն դէպքում ընդունելութեան քննութիւնները կը սկսվեն ամսիս 17-ին։ Տեղեր չը կան 2, 5, 6 և 7-դ դասարաններում։

◆ Կովկ. բարձր իշխանութիւնը միջնորդել է, որ գանձարանից տարեկան բաց թողնվի 500 ր. Սուխումի ուսուցչական սեմինարիայում աբխազական լեզուն աւանդելու համար։

◆ Վրաստանի էկզարխ եպիսկոպոս Պիտիրիմը ամսիս 8-ին կը վերադառնայ Բաքուից։

◆ Տարվայ սկզբից մինչև օգոստոսի 1-ը քաղ. գանձարանը անշարժ կայքերի գնահատական շարքից ստացել է 704,860 ր.։ Անցեալ տարի նոյն ժամանակամիջոցում ստացվել էր 568,578 ռուբլի։

◆ Համառուսական քաղաքների միութեան գլխաւոր լիազօրի օգնական Կիշկին անցեալ օրը եկաւ Թիֆլիս և քաղաքագլխի պաշտօնակատարի հետ դիտեց քաղաքների միութեան լազարէթները։ Կիշկինը երէկ մեկնեց Ալէքսանդրապոլ, որտեղից գնալու է Սարիղամիշ, Իգդիր, ուր կան միութեան հաստատութիւնները և ուր գալիս են փախստականների խմբերը։

◆ Օգոստոսի 4-ին Թիֆլիսում ստացվեց 13 վագոն ալիւր և 5 վագոն շաքար։

### ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Ռիգայում լատիշական առաջին բատալիօնի երդուեցնելու օրը չը տեսնված հայրենասիրական ցոյց է տեղի ունեցել։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

I

Մարաղա, 17 յուլիսի

Յուլիսի 10-ին Միանդաբ հասաւ Սաուջ-Բուլաղի դատաւորը, որին պահապան դրված էին զարգավարի 100 ձիաւոր։ Նմանապէս Սուլդուզից եկել էին 100-ի չափ էլ ղարափափախ ձիաւորներ։ Դատաւորը մի քանի օր Միանդաբում սպասելուց յետոյ՝ պիտի ուղևորվէր իր պաշտօնատեղին։ Քրդական օֆիցէրներից մի քանի հոգի եկել էին տեսութեան։

Ամսիս 12-ին Սաուջ-Բուլաղի դատաւորը Միանդաբում կալանաւորեց 10 հոգի աչքի ընկնող մարդիկ, բայց Սամսամի պահանջմամբ ազատ արձակեց, իսկ ամսիս 15-ին նա ուղարկվեց իր պաշտօնատեղին։ Քրդերից բաւական աղաներ ճանապարհին սպասում էին դատաւորին, որ առօք-փառօք տանեն Սաուջ-Բուլաղ։ Ամսիս 16-ին դատաւորը Սաուջ-Բուլաղում կը լինի։

Երէկ տեղս եկան մի խումբ խանութեան քրդեր։

Ս. Դ.-եան

II

Ռաշտ, 15 յուլիսի

Էնզէլիից մինչև Ռաշտ ընդամենը 35 վերստ է։ Կառապանները, օգտվելով Պարսկաստանի ընդհանուր կամայականութիւնից, անասելի չափերի էին հասցրել կառքի արժէքը՝ 12—15 ր. շատ աւելի թանգ, քան Բագուից Թիֆլիս 530 վերստ II կարգով։ Քաղ. վարչութիւնն այդ շահագործման առաջն առնելու համար՝ որոշել էր տակսա 6 ր. բոլոր կառապանները մի շաբաթ գործադուլ անելուց յետոյ, վերջապէս համակերպվեցին, բայց մենք համոզված ենք, թէ դարձեալ իրանց ասածը կանեն։ Այստեղ օրէնքը 24 ժամ միայն կարող է իր գոյութիւնը պահել...

Սկսվել է պարսկական ծոմապահութիւնը. ցերեկը կեանքը մեռած է, բոլորը քնած, իսկ գիշերը մինչև լոյս ուտում, խմում, զուարճանում են։ Ուղղակի գիշերը փոխվել է ցերեկի և աւելի ևս կենդանի և եռուն։

Մար

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝
№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բօրժօմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝
№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից — 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բօրժօմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
**Բժշկ. Բ. Նաւասարդեանի**
Հիմնված 1880 թ.
(Պուշկինի, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի և «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. խիրուրգ. հիւանդ. և շտապ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—134

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**Բենդեր-Գեազի** հասարակութեան համար հարկաւոր է
ՀԱՅ ԲԺԻՇԿ
ռուսական ցենզով։ Ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել հետևեալ հասցէով՝ Черезъ Красноводскъ, въ Бендеръ-Гязь (Персія). Александру Ериджакьянцу.
525 4—1

**Ղարասուբազարի** հայոց եկեղեցու համար հարկաւոր է աջող ձայնով եկեղեցու արարողութիւններին հմուտ ձայնագրագէտ
ՏԻՐԱՑՈՒ
առնուազն թեմական դպրոցի 4 դաս. կրթութեամբ, որը կառավարելու է եկեղեցու երգեցիկ խումբը, դպրոցում ստանձնելու է վերակացութիւնը, աւանդելու է երգեցողութիւն և երկրորդական առարկաներ։ Պայմաններն են.—Սենեակ և վառելիք, ռոճիկ՝ եկեղեցուց տարեկան 180 ր., արդիւնք 200—300 ր. դպրոցից 180 ր.։ Դիմել՝ г. Карасубазаръ, (Таврич. губ.) Священнику А. Мѣдникянцу.
526. 2—1

**Եղեսիայի** եկ.-ծխ. տղայոց քառամեայ և օր. եռամեայ դպրոցների համար հարկաւոր են
2 ՈՒՍՈՒՑԻՉ
միջնակարգ կրթութեամբ։ Շաբաթական կանոնաւոր 25—26 դաս և հերթ. վերակացութեան պաշտօն տղայոց դպրոցում 3 օր։ Տարեկան ռոճիկ 450 ր., սենեակ և ծառայ։ Ցանկացողները թող անյապաղ դիմեն հետևեալ հասցէով՝ Черезъ г. Моздокъ, въ м. Эдиссію, Эдиссійскому армянскому церковно-приход. Попечительству.
Եղեսիայի դպրոցների աւ.-ուսուցիչ՝
Վ. Վլասեանց
524 3—1

**Ծախվում են**
1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ՓԱՂՁՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և ռեցեպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրօնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, ռեցեպտներով։ Գինը 50 կոպ.։
2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՋԵՒՆ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը։ Բազմաթիւ տնային դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։
3) «ԾԻԾԱՂԻ ՏԿՃՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անէկդոտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ ակճօրի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։
Այս երեք գրքերը միասին պահանջողներին
ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ
երկու հետևեալ գրքերը. 1) «Անկարգ մատի շալվարը» ծիծաղաշարժ վօդևիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.)։
Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. առաջուց ուղարկել անպայման պէքէվօդով։ (Մարկաներ չը դնել նամակներում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ)։ Հասցէ՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаяну.
(հ.կ.) 311. 100—27

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
վաճառվում են հետևեալ հրատարակութեանց սակաւաթիւ օրինակները

| | |
|---|---|
| 1) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Գր. Արծրունու գրական գործուն. 25-ամեակի առիթով, Խ. Մալումեանի, | գ. 50 կ. |
| 2) АГРАРНЫЯ ПРОБЛЕММЫ, Ал. Калантаръ, | գ. 10 կ. |
| 3) СУДЬБА ТАБАКОВОДСТВА НА ЧЕРНОМОРСК. ПОБЕРЕЖЬѢ, Ал. Калантаръ, | գ. 15 կ. |
| 4) ԻՆՔՆԱԿՈՉ ԻՇԽԱՆԸ, Վիլհէլմ Հաուֆի, թարգմ. օր. Վ. Տէր-Նիկողայոսեանցի, | գ. 10 կ. |
| 5) АРМЯНСКАЯ ПОЭЗІЯ ВЪ ЛИЦѢ РАФАИЛА ПАТКАНЬЯНА, Гр. Чалхушьяна, | գ. 50 կ. |
| 6) ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ, բժ. Ա. Բուդաղեանի, | գ. 05 կ. |
| 7) ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ՀՐԱԲՈՒԽ, Վ. Լօնկեվիչի, | գ. 06 կ. |
| 8) ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒՀԻ, Շէլգոբինի, թարգմ. Խ. Մ.-ի, | գ. 05 կ. |
| 9) ԵՐԿՈՒ ՆՈՎԷԼԼԱ, Իւհաննի Ահօյի, թարգմ. Լ. Բաբայեանի, | գ. 10 կ. |
| 10) ՍԻՍՏԵՄ, Մ. Հալբէի, և ԵՐՋԱՆԻԿ ԻՇԽԱՆԸ, Օ. Վիլդէի, թարգմ. Լ. Բաբայեանի, | գ. 15 կ. |
| 11) ՀՕՐՑԵՆ, Գ. Տէր-Ռուբինեանի, | գ. 40 կ. |
| 12) ԴԺՈԽՔ, Ց. Ջանիկեանի, II հտ., | գ. 30 կ. |
| 13) СѢРА, Лекція д-ра А. Арцруни, | գ. 20 կ. |

Այս գրքերից մի մի օրինակ պահանջողներին զեղչ է լինելու 20°/₀, ճանապարհածախսն էլ մեզ վրա։
Դիմել՝ Ред. газеты «МШАКЪ», Тифлисъ.
(8) 0—3

ՄԱՆԹԱՇԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
(Հիմնված Թիֆլիսի Վաճառական. Ընկ. միջոցներով)
Վերաքննութիւնները—օգոստոսի 24-ին, 25-ին և 26-ին։
Ընդունելութեան քննութիւնները—օգոստոսի 26-ին, 27-ին և 28-ին։
Ուսումնարանն ունի նաև այբուբենական բաժանմունք։
Մաղթանքը և պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 1-ին, առաւօտեան ժամը 8½-ին։
(օ. ժ.) 506. 5—3

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն.
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշգրիտ և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այլնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՓՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆօն № 67.

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.